Ս. ՎՇՕՍԷԿ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԱՐԵՒՄՈՒՏՔՈՒՄ

Ռուս. թարգ. Լ. Բաբայեանի

1906 թ. ԹԻՖԼԻՍ

Թ Ի Ֆ Լ Ի Զ
Էլեֆտրաշարժ Տպարան «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. Մադաթեան փող. №

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀԻՄՔԵՐԸ
ԱՐԵՒՄՈՒՏՔՈՒՄ

Պետութիւնը մարդկանց միութիւն է։ «Միութիւն» խօսքը այստեղ պէտք է հասկանալ ոչ թէ ընկերակցութեան՝ որ և է առանձին բարեկամական յարաբերութիւնների մտքով, այլ ուղղակի մարդկանց այն միութիւնը, որ ունի ընդհանուր նպատակներ, ընդհանուր կարգ և ընդհանուր իշխանութիւն։ Իշխանութեան նպատակն է պահպանել այդ կարգը և իրագործել այդ նպատակները։ Մարդկային հասարակութիւնը պետութեան մէջ կազմուած է որոշ ձևով կամ, ինչպէս ասում են, կազմակերպուած է։ Հէնց դրա համար էլ կարելի է ասել, որ պետութիւնը մարդկանց կազմակերպութիւն է։ «Կազմակերպութիւն» բառը աւելի ճիշտ է, քան «միութիւն» խօսքը, որովհետև միութիւնը ենթադրում է, որ մարդիկ կամաւոր կերպով են միացել միմեանց հետ, իսկ պետական միացման մէջ գոյութիւն ունի մի իշխանութիւն, որին հպատակւում են ամենքը, լինի այդ հպատակութիւնը կամաւոր թէ ակամայ։ Դրանով և տարբերւում է պետութիւնը մարդկային միւս տեսակի միացումներից կամ հասարակութիւններից. այնտեղ իշխանութիւնը սիպողական է։ Հետևապէս և մենք կարող ենք ասել, որ պետութիւնը մարդկանց ստիպողական կազմակերպութիւն է։

Բայց մարդիկ ապրում են երկրի վրայ, ուրեմն նրանց կազմակերպութիւնն էլ պէտք է ունի երկրիս մակերևոյթի մի մասը։ Երկրի այդ մակերևոյթը, որ պատկանում է պետութեան և որի վրայ տարածւում է պետական իշխանութիւնը, կոչւում է պետութեան տերիտորիա։ Իւրաքանչիւր մարդ, որ իր ոտքը դնում է այդ տերիտորիայի վրայ, թէկուզ նա մինչև անգամ օտարերկրացի լինի, պէտք է հպատակի պետական իշխանութեանը։ Եթէ այդպէս չլինէր, այն ժամանակ ամեն օտարերկրացի կարող էր խախտել և խանգարել պետական կարգը։ Հետևապէս սրանից պարզ է, որ պետութիւնն է ունոր տերիտորիայի վրայ գտնուող մարդկանց այն

կազմակերպութիւնը, որը հպատակւում է ստիպողական իշխանութեան։

Գուցէ ձեզ օտարօտի երևայ այն հանգամանքը, երբ թէ միայն պետական իշխանութիւնը իրաւունք ունի մարդկանց ստիպել իրեն հպատակւելու։ Ընտանիքում հայրը ստիպում է որդուն իրեն հնազանդւելու, իւրաքանչիւր արտելի մէջ ամենքը լսում են իրանց աւագին և այլն։ Բանն էլ հէնց նրանումն է, որ ընտանիքի, արտելի և ընկերութիւնների մէջ գոյութիւն ունեցող ստիպողական իշխանութիւնը լինում է պետութեան թոյլատրութեամբ և ոչ թէ նրանից անկախ։ Այդ իշխանութիւնը ստանում են պետութեան իշխանութիւնից, որը որոշում է հօր, ընկերութեան նախագահի և ուրիշների իշխանութեան սահմանները։ Իսկ ինքը պետական իշխանութիւնը ոչ մի տեղից չէ ստանում իր իշխանութիւնը և ոչնչով չէ սահմանափակւած։ Այդպիսի անկախ, և անսահման իշխանութիւնը կոչւում է ծայրագոյն իշխանութիւն կամ վեհապետութիւն, իսկ այդօրինակ իշխանութիւն ունեցողը՝ վեհապետ։ Այդ իշխանութիւնը ստեղծւել է բնական կերպով և ոչ թէ որև է մէկից հաստատւել։

Մեզանից շատ ու շատ դարեր առաջ, երբ երկրագնդի վրայ շատ ազգաբնակութիւն չկար, մարդիկ ապրում էին առանց պետական իշխանութեան։ Բայց երբ առանձին ցեղեր սկսում են երկրներ գրաւելու համար թշնամանալ ուրիշ ցեղերի հետ, այն ժամանակ այդ ցեղերը ստիպւած են լինում գործել միաբան և որոշ ծրագրով։ Կարիք է զգացւում առաջնորդի, որ կարողանայ ղեկավարել այդ պատերազմը։ Պատերազմի ժամանակ առանձին իշխանութեամբ օգտւող առաջնորդը սկսում է իր ցեղին պատկանող միւս անդամների մէջ աչքի ընկնել և զատւել։ Նրան սկսում են լսել և խաղաղ ժամանակը. նրան է պատկանում աւարի մեծ մասը։ Դրա համար առաջնորդի ձեռքն է անցնում հարստութիւնը, որից զուրկ են նրա միւս ցեղակիցները։ Իսկ հարստութիւնն էլ նրա ազդեցութիւնն ու իշխանութիւնը աւելի ևս մեծացնում է ցեղի մէջ։ Առաջնորդի շուրջը խմբւում է օգնականների շրջանը թէ պատերազմի և թէ խաղաղութեան ժամանակ։ Այդ շրջանին պատկանողները նրանից են ստանում իշխանութեան մի մասը մնացած ցեղակիցների նկատմամբ, բացի դրանից և աւարի մի մասը։ Այդպիսով ամբողջ ժողովրդից հետզհետէ անջատւում է մշտական զինուորների դասակարգը, որը իր զէնքի և հարստութեան շնորհիւ կրկնակի ոյժ է ստանում։ Պատերազմների ժամանակ մի ժողովուրդը յաղթում է միւսին, այն ժամանակ յաղթող ժողովուրդը խլում է յաղթւած ժողովրդի հողերը և բաժանում իր մէջ։ Առիւծի բաժինը, ի հարկ է, ստանում են պատերազմի առաջնորդը և նրա մշտական զինուորները։ Հետևապէս յաղթւած ժողովրդի դրութիւնը ուրիշ տեսակ է լինում, քան ազատ ազգաբնակութեան դրութիւնը։ Յաղթւածների վերաբերմամբ առաջնորդը օգտւում է աւելի մեծ իշխանութեամբ։ Սակայն ժամանակի ընթացքում այդ իշխանութիւնը տարածւում է նաև յաղթողների վրայ, որոնք քիչ իրանց ամենաազքատ խաւերում խառնւում են նուաճուածների հետ։ Այդպիսով ուրեմն պատերազմների շնորհիւ հետզհետէ երևան են գալիս տիրապետող դասակարգերը և ստեղծւում է վեհապետի իշխանութիւնը։ Այդ իշխանութիւնն է դնում օրէնքներ, կառավարում է պատերազմի և խաղաղութեան ժամանակ և դատում է ազգաբնակութեան։ Այդ իշխանութիւնը վարելիս վեհապետութիւնը յենւում է տիրապետող դասակարգերի վրայ, որոնց նա ստիպւած նոր արտօնութիւններ է տալիս։ Ժամանակի ընթացքում ամբողջ ժողովուրդը խիստ կերպով բաժանւում է ճորտացած գիւղական ազգաբնակութեան իրաւազուրկ մասսայի և հողատէր-կալուածատէրների (ֆէոդալներ), որոնք մասամբ բաղկացած են զինուորական դասակարգից, մասամբ էլ հոգևորականներից։ Վերջիններս իրանց հեղինակութեամբ կարծես թէ, սրբագործում են պետական իշխանութիւնը։ Ազգաբնակութեան մի քանի դասակարգերի միւս դասակարգերի վերաբերմամբ ունեցած կազմակերպւած տիրապետութեան այդ կարգը անսահման կերպով տիրում է մինչև ԺԸ. դարը։ Միայն քաղաքների ամուր պարիսպների ետևում պահպանւեց անհամեմատ աւելի ազատ ազգաբնակութիւն, որը կռւում էր ֆէոդալների կամայականութեան դէմ։ Այդ քաղաքներում հետզհետէ կենտրոնանում էին հարստութիւնն ու գիտութիւնները, այնտեղ ծնւեց և պետական աւելի լաւ ու աւելի արդարադատ կարգերի համար մտածող ազատ միտքը։ Փիլիսոփայի բերանով այդ միտքը հին ժամանակի նկատմամբ ասում էր հետևեալը. «մարդ ազատ է ծնւել, բայց նա ամենուրեք կաշկանդւած է շղթաներով»։

Երբ այդ գիտակցութիւնը տարածւեց ժողովրդի մէջ, պետական հին կարգերը չէին կարող այլևս հաստատուն մնալ, ո-

բովհետև դրանք միայն ոյժի վրայ չեն հիմնւում։ Ազգաբնակութեան ընդհանուր գիտակցութեան մէջ պետական կազմակերպութիւնը պէտք է համակրութեան արժանանայ։ Ազգաբնակութիւնը պէտք է մտածէ, որ ինքը թէև զրկւում է ազատութիւնից, բայց դրա փոխարէն ստանում է ուրիշ բարիքներ, որոնք իրեն լիառատ վարձատրում են։ Այդ միտքը կարող է խաբուսիկ լինել, սակայն և այնպէս նա անհրաժեշտ է։ Հէնց որ նա ընկնում է, քայքայւում է պետութեան նեցուկը, որովհետև վերջի վերջոյ ոյժը միշտ կլինի մեծամասնութեան կողմը։

Ժողովուրդը չէ կարող ինքը իր ճնշողը լինել։ Սակայն չնայելով դրան, նա ստիպւած է այս կամ այն հաստատութիւններին (օրգաններին) յանձնել կառավարութեան առանձին մասերը։ Առանձին անհատներին կամ անհատներից բաղկացած զանազան ժողովներին իշխանութիւն յանձնելու այդ անհրաժեշտութիւնը սաստիկ մտահոգութիւն էր պատճառում էր դեռ 18-րդ դարու նախ յեղափոխ. գրողներին։ Այդ բանը հասկանալի է, որովհետև պատմութիւնը բազմաթիւ օրինակներ է ցոյց տալիս այն բանի համար, որ իւրաքանչիւր անհատ, երբ իշխանութիւն է ստացել, աշխատել է այդ իշխանութիւնը մեծացնել, դարձնել նրան անսահման, այնպէս որ նրան ստորադրւող մարդիկը ստրուկներ են դառնում։ Հէնց դրա համար էլ կարիք և ցանկութիւն արտայայտւեց պետական իշխանութեան այնպիսի կազմակերպութիւն տալ, որպէսզի այդ իշխանութիւնը չկարողանար ընդակալ և ճնշող լինել։ Եւ որովհետև Եւրոպայի բոլոր պետութիւններից միայն Անգլիան էր օգտւում համեմատական ազատութեամբ, դրա համար էլ այդ երկրի պետական կազմակերպը սկսեցին եռանդով ուսումնասիրել։ Այդ ուսումնասիրողների թւումն էր և այդ ժամանակի նշանաւոր գրող Մոնտեսկիէոն, որին վերագրւում են պետական իշխանութիւնների բաժանման ուսմունքը։ Իսկապէս միևնոյն մտքերը յայտնել են և Մոնտեսկիէոյից առաջ, բայց վերջինս տուեց այդ վարդապետութեան լիակատար ձևը։ Անգլիայի հաստատութիւնները ուսումնասիրելով, Մոնտեսկիէոն նկատեց, որ այդ երկրի պետական իշխանութիւնը ոչ թէ ամբողջապէս մի որևէ օրգանի է պատկանում, այլ բաժանւած է մի քանի օրգանների միջև։ Այդ երևոյթն էլ Մոնտեսկիէոյի մէջ զարթեցրեց այն կարծիքը, որ միայն այդ օրինակ բաժանման ժամանակ հնարաւոր է ժողովրդական ազատութիւնը։ Իշխանութիւնները միմեանց պա-

հում և թոյլ չեն տալիս, որպէսզի իրենցից մէկն ու մէկը անսահման բռնակալ դառնայ։ Ըստ Մոնտեսկիէոյի վարդապետութեան պետութեան մէջ պէտք է լինի երեք իշխանութիւն։ Պետութիւնը ամենից առաջ և անհրաժեշտօրէն պէտք է ունենայ ընդհանուր կանոններ, կամ ինչպէս ասում են, նորմաներ, որոնք պարտադիր լինին ամբողջ ազգաբնակութեան և պետական բոլոր հիմնարկութիւնների համար։ Այդ նորմաները կամ օրէնքները հրատարակում է մի առանձին իշխանութիւն, որը և կոչւում է օրենսդրական իշխանութիւն։ Սակայն բաւական չէ հրատարակել օրէնք, հարկաւոր է և գործադրել նրան, որովհետև ինչպէս ասել է Եկատերինա Բ. կայսրուհին. «Զուր է օրէնքներ գրել, երբ նրանց չեն գործադրելու»։ Օրէնսդրական իշխանութիւնը որոշում է, օրինակի համար, ազգաբնակութիւնից ժողովելիք հարկերի քանակը, բայց դեռ շատ գործողութիւններ են հարկաւոր, որպէսզի իսկապէս կարողանան այդ հարկերը ժողովել պետական գանձարանում։ Այն իշխանութիւնը, որ կարգադրում է այդ գործողութիւնները, կոչւում է գործադիր կամ վարչական իշխանութիւն։ Վերջապէս ամեն ժամանակ կարող է պատահել, որ ոչ միայն չյարգեն օրէնքները, այլ և նոյն իսկ հակառակեն նրանց։ Այդ հանգամանքը անհրաժեշտօրէն առաջ է բերում մի երրորդ՝ դատող իշխանութիւն, որի պարտականութիւնն է պահպանել օրէնքի ոյժը։ Հէնց դրա համար էլ դատող իշխանութիւնը իրաւունք է ստանում օրէնքի խախտման համար պատիժներ սահմանել (քրէական դատարան) և վերջ տալ քաղաքացիների իրար հետ ունեցած վէճերին՝ իրաւունքների վերաբերմամբ (քաղաքացիական դատարան)։ Երբ այդ երեք իշխանութիւնները կատարում են միայն իրանց գործը և չեն խառնւում միւսների գործերում, երբ նրանցից իւրաքանչիւրն անկախ է իր գործողութիւնների մէջ, այն ժամանակ նրանցից և ոչ մէկը չի կարող կամայական լինել և ճնշել ժողովրդի ազատութիւնը։ Ահա թէ ինչ է ասում դրա մասին հէնց ինքը Մոնտեսկիէոն։ «Երբ միևնոյն անձնաւորութեան կամ միևնոյն կոլլեգիայի մէջ օրէնսդրական իշխանութիւնը միացած է գործադիր իշխանութեան հետ, այն ժամանակ ազատութիւն չկայ, որովհետև կարելի է երկիւղ ունենալ, որ այդ օրինակ միապետը կամ սենատը կարող են հրատարակել բռնակալական օրէնքներ, որպէսզի բռնակալական կերպով էլ գործադրեն նրանց։ Ազատութիւն չկայ և այն

դեպքում, երբ դատող իշխանութիւնը բաժանուած է օրէնսդրական կամ գործադիր իշխանութիւնից։ Եթէ այդ իշխանութիւնը միացած լինէր օրէնսդրական իշխանութեան հետ, այն ժամանակ քաղաքացիների կեանքի և ազատութեան համար նշանակուած իշխանութիւնը կամայական կլինէր, որովհետև դատաւորը կլինէր և օրէնսդիր։ Եթէ այդ իշխանութիւնը միացած լինէր գործադիր իշխանութեան հետ, այն ժամանակ դատաւորը ճնշողի այժ էլ կունենար։ Վերջապէս ամեն ինչ կ'խորտակէր, եթէ միևնոյն մարդը կամ պաշտօնեաների, ազնուականների կամ ժողովրդի ներկայացուցիչների միևնոյն խումբը իր ձեռքում ունենար այդ երեք իշխանութիւնը, այն է օրէնքներ սահմանելը, հասարակական վճիռները ի կատար ածելը և մասնաւոր անհատների «յանցանքները և վէճերը դատել»։ Մոնտեսկիէյի կարծիքով այդպիսի կառավարութիւնը իր ընդհանուրով ձեռնարկութիւններ կարող էր քայքայել ամբողջ պետութիւնը և իր ձեռքում ունենալով դատող իշխանութիւն, նա կարող էր մասնակի վճիռներով ոչնչացնել ամեն մի քաղաքացու»։ Բացի դրանից Մոնտեսկիէն բացատրում է, թէ ինչպէս պէտք է կազմակերպուած լինի այդ իշխանութիւններից իւրաքանչիւրը, որպէսզի կարողանայ իրագործել իր նպատակը։ Որովհետև ամեն մի ազատ պետութեան մէջ ազատ հոգի ունեցող իւրաքանչիւր քաղաքացի ինքը պէտք է իրեն կառավարի, դրա համար էլ օրէնսդրական իշխանութիւնը պէտք է պատկանի ամբողջ ժողովրդին, բայց ի՛նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեծ պետութիւնների մէջ այդ բանը անհնարին է, դրա համար պէտք է, որ օրէնսդրական իշխանութիւնը լինի ժողովրդի ընտրեալների ձեռքում։ Գործադիր իշխանութիւնը պէտք է լինի մի միապետի ձեռքում, որովհետև այդ իշխանութիւնը պահանջում է արագ որոշումներ և գործողութիւններ։ Վերջապէս աւելի լաւ է դատաստանական իշխանութիւնը յանձնել ժողովրդից ընտրած երդուեալ դատաւորներին։ Այն ժամանակ այդ երկիւղ ներշնչող իշխանութիւնը կարծես թէ գոյութիւն չունի և ազգաբնակութիւնը սովորում է վախենալ դատարանից և ոչ թէ դատաւորներից»։

Ահա թէ ինչպէս պէտք է լինի պետական կազմակերպութիւնը ըստ Մոնտեսկիէյի և ինչպէս էր նրա կարծիքով Անգլիայում։ Սակայն եթէ մենք ինկատի ունենանք այդ երկրի քաղաքական կազմակերպութիւնը, այնժամանակ կ'համոզուենք, որ Մոնտեսկիէն սխալուել է, այնտեղ գոյութիւն չէ ունեցել իշխանութիւնների այդ օրինակ բաժանումը, ընդհակառակը դրանք մի տեսակ իրար հետ հիւսուած էին, շատ բանում կախուած լինելով միմեանցից։ Մենք կ'ծանօթանանք Անգլիայի հետ իր ժամանակակից ձևով, որը պէտք է ասել, իր էական կողմերով նոյնն էր և ԺԸ. դարում։

I

Անգլիայում գոյութիւն ունեն հետևեալ բարձրագոյն պետական հաստատութիւնները. ա) թագաւոր, որ իր կոչումը կրում է ժառանգական իրաւունքով. բ) պարլամենտ, որ բաղկացած է երկու պալատներից. լորդերի պալատ (կամ պարզ ձևով վերին պալատ) որը բաղկացած է Անգլիայի, Շոտլանդիայի և Իրլանդիայի ազնուականութիւնից և համայնքների պալատ (ստորին պալատ), որ բաղկացած է գրաֆութիւնների, [1] քաղաքների և համալսարանների ներկայացուցիչներից և գ) Վեստմինստրի դատարան, իբրև բարձրագոյն դատաստանական հիմնարկութիւնը։

Առաջին հայեացքից թւում է, իբր թէ ամբողջ իշխանութիւնը կենդրոնացած է թագաւորի ձեռքում։ Իբրև գործադիր իշխանութեան գլուխ, թագաւորը նշանակում է մինիստրներին, տնօրինում է երկրի փողերը, զօրքը և նաւատորմը. նա է հրատարակում պատերազմ և կնքում խաղաղութիւն ու դաշնագիրները օտար պետութիւնների հետ, որտեղ նշանակում է իր ներկայացուցիչներին (դեսպաններին, ներկայացուցիչներին և միւս, այսպէս կոչուած դիպլոմատիական ագենտներին)։ Իբրև պետութեան տեսանելի գլուխ, թագաւորը հրատարակում է իր ստորագրութեամբ երկու պալատների մշակած և ընդունած օրէնքները, հրաւիրում է պարլամենտը և գահական ճառով ինքն է բաց անում նրա նիստերի շրջանը—սեսիան [2] որ յայտնում է կառավարութեան առաջարկութիւնները բեֆորմների մասին։ Թագաւորը կարող է չհամաձայնել պարլամենտում ձայնից բազմութեամբ ընդունուած օրէնքի հրատարակութեան համար. նա կարող

[1] Անգլիայի վարչական շրջանները։ Ծ. Հ.

[2] Սեսիա կոչում է պարլամենտի անընդհատ նիստերի շարքը։ Մի քանի օրէնսդրութիւնների մէջ, օր. ֆրանսիականում, ճիշտ որոշուած է պարլամենտի տարեկան սեսիայի սկիզբը և տևողութիւնը։ Ծ. Հ.

է ժամանակից առաջ արձակել ստորին պալատը և նոր ընտրութիւններ նշանակել. նա կարող է վերին պալատը մացնել նոր անդամներ, լորդերի աստիճան շնորհելով նրանց: Ինչ վերաբերում է դատարանին, այնտեղ էլ թագաւոր նշանակում է Վեստմինիստրի դատարանի անդամներին և հաշտարար դատաւորներին գրաֆութիւններում: Թագաւորն է նշանակում արդարադատութեան մինիստրին, որին ստորագրւում են բոլոր դատախաղները և որը հսկում է որ գործերը դանդաղ կերպով չընթանան և չմերժւի իրաւաբարութիւնը: Թագաւորն իրաւունք ունի ներել դատապարտեալին և նրա դատին վերջ տալ:

Այդպիսով թագաւորի մէջ կարծես թէ ամփոփւում են բոլոր իշխանութիւնները. նրա անունով են հրատարակւում օրէնքներ, արւում են վարչական կարգադրութիւններ և կատարւում է քաղաքացիական և քրէական դատաստանը: Ահա թէ ինչու համար մի քանի գիտնականներ կարծում էին, որ թագաւորին դրւում է մի առանձին իշխանութիւն, որը տարբեր է օրէնսդրական, գործադիր և դատող իշխանութիւնից: «Նա» գրում էր Բենժամէն Կոնստանը, «սաւառնում է մարդկային առօրեայ յուզմունքներից բարձր»: Այդ գիտնականը ենթադրում էր, որ թագաւորը ոչ մի կուսակցութեան չէ պատկանում, բարձր է կանգնած միւս բոլոր իշխանութիւններից և նրանց գործողութիւնների մէջ կարգ և խաղաղութիւն է մացնում: Սակայն մենք տեսանք, որ թագաւորի իշխանութիւնը հին ժամանակ ստեղծւել է ժողովրդների արտաքին պատերազմների ժամանակ և զարգացել է միևնոյն ժողովրդի դասակարգերի ներքին պատերազմների ընթացքում:

Անգլիայում սկզբում թագաւորի իշխանութիւնը այնքան զօրեղ էր, որ ճնշում էր և ժողովրդին և՛ ազնուականութեան: Դրա համար էլ այս, միմիանց հետ ընդհանրապէս թշնամի դասակարգերը յաճախ միանում էին իրար հետ թագաւորի դէմ: Այն ժամանակ թագաւորը ստիպւած էր իր իշխանութեան մի մասը զիջել և բացի դրանից իւրաքանչիւր անգլիացու վերաբերմամբ ճանաչել որոշ իրաւունքներ: Այդ տեսակէտից ամենամեծ նշանակութիւնը ունէր ա) 1215թ-ի Ազատութիւնների Մեծ Հրովարտակը, որի հիման վրայ ոչ մի ազատ մարդ չէ կարող այլ կերպ բանդարկւել, իրեն հաւասար մարդկանց դատարանի վճռով: բ) 1628 թ-ի իրաւունքների պետիցիան, որի հիման վրայ ընդունեց մի օրէնք, որ իւրաքանչիւր բանտարկեալ պէտք է յանձնի դատարանին նրա բանտարկութեան պատճառները քննելու և դատարանը պէտք է որոշի նրա ազատելու և բանտարկելու մասին: Այդպիսով այդ օրէնքով ընդունւեց, որ նոյն իսկ թագաւորը իրաւունք չունի որ և է մէկին բանտարկութեան մէջ պահելու. 9) 1679 թ-ի այսպէս կոչւած Habeas Corpus-ը, որ որոշեց բանտարկեալին դատարանին յանձնելու ճիշտ ժամանակը և արգելեց դատարանի հրամանով ազատւածին երկրորդ անգամ բանտարկելը Կալանաւորին որոշած ժամանակից ուշ ներկայացնելու համար կալանաւորողը առաջին անգամ ենթարկւում է 100 ֆունտ ստերլինգ [1]) տուգանքի. երկրորդ անգամ ենթարկւում է 200 ֆունտ ստերլինգի և պաշտօնից զրկւում է: Երկրորդ անգամ բանտարկելու համար ենթարկւում է 500 ֆունտ ստերլինգի: Միևնոյն 500 ֆունտ ստերլինգ տուգանքի է ենթարկւում նաև այն դատաւորը, որ կմերժի կալանաւորին իրեն ներկայացնելու հրամանը տալ: Շատ կարևոր է այն հանգամանքը, որ այդ տուգանքը սահմանւած է ապօրինի կերպով բանտարկելուց և տուժած անձի օգտի համար, որովհետև վարչական անձնաւորութեանը չէ կարող իշխանութիւնը ազատել այդ տուգանքից: Անգլիայում բացի դրանից ընդունւել է տան օջաղի, ընակարանի անձեռնմխելիութիւնը, որի շնորհիւ ոստիկանութիւնը կարող է մտնել մասնաւոր տունկամ ընակարանը. առանց դատաստանական իշխանութեան ճիշտ հրամար միմիայն ա) երբ այնտեղ թաղնւած է փնտռւող ոճրագործը, բ) երբ այն տնից օգնութեան է կանչւում և վերջապէս գ) հրդեհի ժամանակ: Այդպիսով անգլիացի քաղաքացու անձնաւորութիւնը պաշտպանւած է վարչական իշխանութեան կամայականութիւններից: Բացի անհատական ազատութիւնից Անգլիայում ընդունւած է մտքերը խօսքերով արտայայտելու, մամուլի, ընկերութիւնների, ժողովների, գործադուլների, կրօնական համոզմունքների և համախմբութիւնների ազատութիւնը: Վերջապէս պետական ամեն տեսակի տուրքերը կարող են միմիայն պարլամենտի հաւանութեամբ որոշել: Այդ իրաւունքները, որոնք պատկանում են իւրաքանչիւր քաղաքացու առանձին և ամբողջ ժողովրդին ընդհանրապէս, արդէն զգալի կերպով սահմանափակում են թագաւորի իշխանութիւնը:

---

[1]) 1 ֆունտ ստերլինգը հաւասար է մօտ 10 ռուբլու:

Ծ. Հ.

Բայց դա դեռ քիչ է: Անգլիական ազատ ժողովրդի թագաւորների սկզբում բռնակալական իշխանութեան դէմ մղած անընդհատ կռիւների ժամանակ, թագաւորները ստիպւած եղան իրանց իրաւունքներից շատերը զիջել նաև հէնց պետական կառավարութեան մէջ: Այդ բանը արւեց կամ նոր օրէնքների հրատարակութեան օգնութեամբ, կամ թէ չէ նոր սովորութիւնների հաստատմամբ, որոնք Անգլիայում օրէնքի ոյժ ունին:

Մենք իսկոյն կտեսնենք, որ պարլամենտը, որի գլխաւոր գործն է նոր օրէնքներ քննել և հրատարակել, ունի բացի օրէնսդրականից ունի և այլ իշխանութիւն: Բայց սկսենք այդ վերջինից: Օրէնքի ամեն մի նախագիծը պէտք է մտնի պալատներից մէկն ու մէկը: Քննութիւնից յետոյ պալատը ընդունում կամ մերժում է այդ նախագիծը: Ընդունւած նախագիծը անցնում է միւս պալատի խորհրդակցութեան, որը կամ համաձայնում է նրա հետ կամ մերժում է, կամ թէ չէ այդ նախագիծը սրբագրութեան է ենթարկում: Վերջին դէպքում նախագիծը վերադարձնում են այն պալատին, որտեղ առաջին անգամ ընդունւել է այդ նախագիծը, և նրա մէջ արւած ուղղումները իր խորհրդածութեանն է ենթարկում: Միայն երկու պալատներից ընդունւած օրէնքի նախագիծը կարող է օրէնք դառնալ: Բայց դրա համար նախապէս հարկաւոր է թագաւորի հաւանութիւնը, որը այդ օրէնքը հրատարակում է իր անունով. կարող է թւալ, որ այդ հանգամանքը թագաւորին նաև հնարաւորութիւն է տալիս օրէնքներ հրատարակելու և առանց պալատների մասնակցութեան: Սակայն դա այդպէս չէ. հրատարակւող օրէնքի մէջ պէտք է դրականապէս ցոյց տրւած լինի, որ այդ օրէնքը հրատարակւում է պալատների համաձայնութեամբ և օրէնքը պէտք է բառացի արտատպած լինի այն ընագրից, որ ընդունել է պարլամենտը: Բացի թագաւորի ստորագրութիւնից պահանջւում է նաև մինիստրի ստորագրութիւնը, իսկ մինիստրները Անգլիայում միշտ կարող են պատասխանատուութեան ենթարկւել պարլամենտի կողմից: Հետևապէս և թագաւորը օրինական կարգը խախտելիս ոչ մի մինիստր առաջարկւած օրէնքի տակ չի ստորագրիլ, ուրեմն և այդպիսի մի օրէնք ոյժ չի ունենալ և ոչ ոք էլ չի գործադրել դա:

Բայց եթէ թագաւորը հնարաւորութիւն չունի ինքը օրէնք հրատարակելու, այն ժամանակ, թւում է թէ, միշտ յարմարութիւններ ունի հակառակ եկուն նոր օրէնքի հրատարակութեան և Veto

(օրէնքի հաստատութեան—մերժումն): Սակայն երկու դարի ընթացքում, սկսած 1707 թւականից ոչ մի դէպք չէ եղել, որ անգլիական թագաւորը մերժած լինի պալատներից ընդունւած օրէնքի համար իր հաստատութիւնը կամ սանկցիան տալու: Եւ դա շատ հասկանալի է, որովհետև պարլամենտի մէջ ամփոփւում է ամբողջ ժողովրդի ոյժը: Այս վերջինին կարող է դիմել թագաւորը իր կամ իր մինիստրների պարլամենտի հետ ունեցած անհամաձայնութեան դէպքերում: Թագաւորն իրաւունք ունի համայնքների պալատի ժողովրդական ներկայացուցիչներին արձակել մինչև եօթնամեայ այն ժամանակամիջոցի լրանալը, որով նրանք ընտրւում են: Այն ժամանակ հարցը արդէն վճռում է ժողովուրդը, եթէ նա կրկին ընտրում է այնպիսի ներկայացուցիչներ, որոնք պաշտպանում են այն, ինչոր արձակւած պալատն էր պաշտպանել, և այն ժամանակ թագաւորին միայն մնում է հնազանդւել:

Թագաւորին է պատկանում պարլամենտին տարեկան սեսիայի հրաւիրելու իրաւունքը: Թւում է, որ թագաւորը կարող է յետաձգել ժողովրդական ներկայացուցիչներին հրաւիրելը և այդպիսով ժամանակաւորապէս նրանց զրկել դործերի վրայ ազդեցութիւն ունենալուց: Բայց բանը նրանումն է, որ Անգլիայում պարլամենտն է հաստատում իւրաքանչիւր տարւայ եկամուտների և ծախքերի (պետութեան բիւդճէն) և բացի դրանից զօրքի պահպանութեան նախահաշիւը, իսկ միապետի ռոճիկը մի առանձին յօդւածով որոշւում է բիւտճէի մէջ, այսպէս կոչւած ցիվիլ լիստով: Եւ թէկուզ այդ ռոճկի չափը նշանակւում է միանգամ ընդմիշտ թագաւորի գահակալութեան ժամանակ, բայց դա պէտք է պարլամենտը ամեն տարի քուէարկի. 1)

Անգլիայում թագաւորը իրաւունք չունի ընդհատել պարլամենտի նիստերը և այդպիսով դադարեցնել իր համար ոչ ցանկալի օրէնքի քննութիւնը: Այդ բոլոր պատճառների համար օրէնսդրական իշխանութիւնը բոլորովին պատկանում է ժողովրդին և նրա ներկայացուցիչներին: Թէ ինչ նշանակութիւն ունի այդ դէպքում լորդերի պալատը, դրան ես յետոյ կը դառնամ, երբ խօսք կլինի երկու պալատների միմիանց հետ ունեցած յարաբերութիւնների մասին:

---

1) Անգլիայում այդ ծախքը հաւասար է 885 հազար ֆունտ ստերլինգի, որից 60 հազարը ընկնում է թագաւորի անձնական կարիքների վրայ, իսկ մնացածը ծախսւում է նրա արքունիքի պահպանութեան համար:

Ինչ վերաբերում է վարչական իշխանութեան, պէտք է նըկատել, որ նրա գործունէութիւնը միայն գործադրութեան մէջ չէ կայանում։ Գործածութեան մէջ մտցնելով այդ օրէնքները, գործադիր իշխանութիւնը պէտք է ակամայից բացատրի և լրացնի նրանց միտքը, որովհետև օրէնքը չէ կարող նախատեսնել բոլոր մանրամասնութիւնները։ Նշանակում է, որ վարչական իշխանութիւնն է անում ընդհանուր (բոլոր մարդկանց վերաբերող) և մասնաւոր (առանձին անհատների վերաբերող) կարգադրութիւններ։ Այդ բոլոր կարգադրութիւնները պէտք է օրինական լինին։ 1689 թ-ին այսպէս կոչած իրաւունքների դեկլարացիայով ուղղակի ընդունուեց, որ թագաւորը իրաւունք չունի որևէ մէկին ազատելու օրէնքները կատարելուց։ Օրէնքներին հնազանդելը վերաբերում է նոյն իսկ իրեն թագաւորին։ Գահի վրայ բարձրանալու ժամանակ նա երդում և դրական պատասխաններ է տալիս Բենտերբրիի արքեպիսկոպոսի իրեն ուղղած հարցերին։ Այդ երդումով թագաւորը խոստանում է «սովորութիւնների, յօդուածների և օրէնքների համաձայն կառավարելու և իր իշխանութիւնից օգտուելու օրէնքների և արդարադատութեան համաձայն»։ Երդումից հրաժարուել միևնոյն է թէ գահից հրաժարուել։ Այդպիսով թէկուզ թագաւորը սեպհական, այն է ժառանգական իրաւունքով է բարձրանում գահը, բայց այդ իրաւունքը միայն որոշ պայմաններով է պատկանում նրան։

Թագաւորը նշանակում է մինիստրներ վարչական բոլոր ճիւղերի կառավարութեան համար։ Սակայն նրա իրաւունքը դըրանում էլ սահմանափակուած է։ Սովորաբար մինիստրները իրանց պաշտօնները մնում են մինչև այն ժամանակ, երբ վայելում են համայնքների պալատի վստահութիւնը։ Եթէ պալատները մերժում են մինիստրների առաջարկած օրէնքը, կամ թէ վարչութեան որևէ գործողութիւնների նկատմամբ ցոյց են տալիս տհաճութիւնը, մինիստրները հրաժարական են տալիս։ Նոր մինիստրները թագաւորից չեն նշանակուում։ Նա միայն կանչում է այն կուսակցութեան ղեկավարին (լիդեր), որը մինիստրութեան հրաժարեցնելու ժամանակ պալատում ձայնից բազմութիւն ունէր։ Թագաւորը մեծամասնութեան հրաւիրած լիդերին յանձնում է կազմել մինիստրների նոր կաբինէտ, այսինքն մինիստրական բոլոր պաշտօնների համար մարդիկ ընտրել։ Այն անձնաւորութիւնը, որին յանձնուած է կաբինէտ կազմելը, դառնում է մինիստր-նախա-

գահ կամ առաջին մինիստր, որի ղեկավարութեամբ է լինում ամբողջ գործադիր իշխանութիւնը երկրի ներսում և բոլոր յարաբերութիւնները օտար պետութիւնների հետ։ Հէնց դրա շնորհիւ էլ արտաքին և ներքին քաղաքականութիւնը կախուած է ոչ թէ թագաւորից, այլ մինիստր նախագահից, որին թագաւորը նշանակում է ոչ թէ իր կամքով, այլ որովհետև այդ մինիստր վայելում է պարլամենտի վստահութիւնը։ Դրան հարկաւոր է աւելացնել և այն, որ կառավարութեան բոլոր կարգադրութիւնները օրինական են միայն այն ժամանակ, երբ դրանք հաստատուած են այն պատասխանատու մինիստրի ստորագրութեամբ, որը անօրինում է այն վարչութեան գործերը, որին վերաբերում են այդ կարգադրութիւնները։

Սակայն ժողովրդական ներկայացուցիչները մինիստրների գործունէութեան վրա չեն ազդում միայն պարլամենտական մեծամասնութիւնից նշանակուած մինիստր-նախագահի ընտրութեամբ։ Պալատի անդամները իրաւունք ունին այդ մինիստրների և նրանց ստորադրեալների գործունէութեան առթիւ ծագած բոլոր հարցերի պատասխանը ստանալու։ Այդ հարցապնդումները երկու տեսակ են լինում. հասարակ հարցապնդում լինում է այն ժամանակ, երբ բացատրում է կառավարութեան պայմանները և դիտաւորութիւնները, երկրորդ տեսակի հարցապնդումը լինում է այն ժամանակ, երբ կառավարութեանը յանդիմանում են նրա կատարած այս կամ այն գործի համար։ Երկրորդ տեսակի հարցապնդումը վերջանում է պալատի հաճութիւնը կամ տհաճութիւնը մինիստրութեան արտայայտելով, հետևապէս և կարող է վերջանալ մէկ մինիստրի կամ ամբողջ կաբինէտի հրաժարականով։ Պալատի այդ վերջին կոնտրոլի շնորհիւ մինիստրների ամբողջ գործունէութիւնը կախումն է ունենում ժողովրդի ներկայացուցիչներից։ Պալատի համակրութիւնը չստանալով մինիստրները, ինարկէ, կարող են խնդրել թագաւորին պալատը արձակելու։ Բայց եթէ կրկին անգամ ընտրուած ներկայացուցիչները կաբինէտի կողմակից չլինին, մինիստրները նորից ստիպուած պէտք է լինին իրանց պաշտօնները թողնելու։ Այդպիսով մինիստրների նշանակելը, գործունէութիւնը և վերջապէս արձակելը կատարում է պարլամենտի անմիջական ազդեցութեան տակ։ Թագաւորը այդ բոլոր բանների տակ միայն ստորագրում է։

Սակայն պարլամենտից է կախուած և մինիստրների դատաս-

տանական պատասխանատուութիւնը։ Ստորին պալատը կարող է նրանց յանձնել վերին պալատի դատաստանին։ Այդ դէպքում թագաւորը, զրկւում է ներումն շնորհելու իրաւունքից և դրա շնորհիւ մինիստրները երբէք չեն կարող պատասխանատուութիւնից խուսափել։ Դրա վրայ պէտք է աւելացնել և այն, որ թագաւորը թէկուզ համարւում է զինուորական ոյժի գլուխը, բայց նա չէ կարող անձամբ առաջնորդել նրան։ Զօրքի և նաւատորմի վերաբերմամբ մինիստրական իշխանութիւնը յանձնւում է է պետական մինիստրներին։ Արտաքին գործերում թագաւորը երևան է գալիս իբրև տէրութեան ներկայացուցիչ, բայց առևտրական դաշնագրերը և այն բոլոր բաները, որոնց հետ կապած են երկրի փողային պարտականութիւնները, պէտք է ներկայացուեն ի հաստատութիւն ժողովրդի ներկայացուցիչների։ Թագաւորը հրատարակում է պատերազմ և կնքում է խաղաղութիւն, բայց պարլամենտը կարող է պատերազմի համար փող չտալ և ստիպել կառավարութեան, որպէսզի վերջինս իր ցանկութեան համաձայն վարւի։

Ինչ վերաբերում է դատարանին, Անգլիայում նա դրած է բոլորովին անկախ։ Այդ անկախութիւնը լինում է դատաւորների անփոփոխելիութեամբ և բաւականաչափ վարձատրութեամբ։ Դրա համար էլ դատաւորները բոլորովին երկիւղ չունին իրանց պաշտօնից զրկւելու կամ թէ նոր պաշտօն ստանալու։ Եւ եթէ մշտական դատաւորը չէ կարող պաշտօնից հեռացնւել, բացառութեամբ նրանց կատարած յանցանքների դէպքերում, աւելի ևս անկախ են երդուեալ նախագահները։ Նրանց ժամանակով են կանչում, և նրանք ամենևին ծառայութեան մէջ չեն գտնւում և դրա համար կառավարութիւնը նրանց վրայ չէ կարող որևէ ճնշում գործ դնել։ Դրա համար էլ անգլիական դատաւորները գործեր վճռելու ժամանակ ՛ի նկատի ունին միմիայն օրէնքներն և կառավարութեան կարգադրութիւններից նրանք, որոնք համաձայն են այդ օրէնքների հետ։ Սակայն պարլամենտն է կոնտրոլի ենթարկում նաև դատաւորներին։ Նա նոյն իսկ կարող է դիմել թագաւորին և պահանջել այդ դատաւորներին փոխելու։

Վերոյիշեալ բոլոր ասածներից երևում է, որ ամբողջ իսկական իշխանութիւնը կենտրոնացած է պարլամենտի ձեռքում։ Թագաւորին միայն մնացել է տէրութեան գլխաւորի նախկին արտաքինը. նա իր ամբողջ իրական իշխանութիւնը հետզհետէ կորցրել

է։ Իսկ այժմ նրան միայն մնացել է ասում է թագաւորներ «տաւառնել», չնառնելով իշխանութիւնների գործողութիւնների մէջ։ Հէնց դրա համար էլ չէ կարելի [illegible] բաւունք ուներ, որ Անգլիան իշխանութիւնների [illegible] համար կարող է իբրև օրինակ ծառայել։ Ոչ թէ միայն իշխանութիւնն է բաժանուած, այլ այդ իշխանութեան գործունէութեան տեսակները և գործունէութեան իւրաքանչիւր տեսակը, կամ ինչպէս ասում են, պետական իշխանութեան ֆունկցիան յանձնուած է պետական մի առանձին օրգանի։ Սակայն դրանք բոլորը կապուած են միմիանց հետ, մասամբ ազդում են իրար վրա, բայց բոլորն էլ պարլամենտից կախում ունին, որ ներկայանում է իբրև պետութեան ամենաբարձր իշխանութիւնը։ Հէնց դրա համար էլ անհրաժեշտ է ծանօթանալ անգլիական պարլամենտի կազմութեան հետ և պարզել թէ այդ պարլամենտը ինչ չափով է ներկայացնում իբրև ամբողջ ժողովրդի իսկական ներկայացուցիչը։

Ամենից առաջ պէտք է ուշադրութիւն դարձնել պարլամենտի երկաստիճան սիստեմի վրայ։ Այդ երևոյթին վերաբերող այն բացատրութիւնները, որ իր ժամանակին տուել է Մոնտեսկիոն, շատ համարձակ են։ Նա ենթադրում էր, որ որովհետև տէրութեան ազգաբնակութիւնը համացեղ չէ, դրա համար էլ «իրանց դիրքով, հարստութեամբ և փառքով աչքի ընկնող մարդկանց համար ընդհանուր ազատութիւնը ստրկութիւն կ՛լինէր», դրա համար էլ կարծում է Մոնտեսկիոն, որ օրէնսդրական իշխանութիւնը ամեն տեղ պէտք է յանձնուած լինի ազնուականների և ներկայացուցիչների պալատին։ Դրանցից իւրաքանչիւրն իրաւունք ունի միւս պալատի մշակած օրէնքների գործադրութիւնը կանգնեցնել։ Այդօրինակ կարծիքի էութիւնը կայանում է նրանում, որ ամեն տեսակ արտօնութիւններ վայելող մարդկանց պէտք է արտօնութիւններ տալ նաև քաղաքական տեսակետից, որովհետև նրանց համար ծանր կլինէր հաւասարւել ժողովրդի մնացած դասի հետ։ Բայց չէ՞ որ այդ ձևով կարելի է արդարացնել ազգաբնակութեան մէկ մասի՝ միւս մասի վերաբերմամբ ունեցած բոլոր առաւելութիւնները և նոյն իսկ ժողովրդին ճնշելը, որովհետև ճնշողի համար դժուար է միանգամից հեռանալ իր սովորական իշխանութիւնից։ Եւ յիրաւի վերին պալատը Անգլիայում գոյութիւն ունի ոչ թէ նրա համար, որ դա անհրաժեշտ է, այլ ուղղակի իբրև մնացորդ ազնուականութեան անցեալ արտօնութիւն-

ների։ Անգլիացիներն ընդհանրապէս չեն սիրում իրանց օրէնքներն և սովորութիւնները փոփոխելու. նրանք իրանց ընաւորութեամբ պահպանողական են։ Դրա համար էլ լորդերի պալատը որ աշխատել է ժողովրդական կամքի վերաբերմամբ խիստ հակառութիւնների մէջ չմտնել, մինչև այժմ կարողացել է պահպանել իր հին ձևը։

Վերին պալատի անդամները ամենից առաջ կազմում են հերցոգները, մարկիզները, կոմսերը, վիկոնտներն և բարոնները։ Այդ տիտղոսներն ու արտօնութիւնները, որոնք կապված են անդամների հետ, ժառանգական են, որովհետև տիտղոս և արտօնութիւն ունեցող անդամի մահից յետոյ այդ բանը անցնում է նրա ընտանիքի աւագ անդամին։ Երբ որևէ ազնուական ցեղ մեռնում և վերջանում է, այն ժամանակ թագաւորը սովորաբար մէկին շնորհում է «պերի» աստիճան, տալով նրան մեռած ցեղի տիտղոսն ու անունը։ Նոր պերն իր ստացած աստիճանի շնորհիւ իրաւունք է ստանում վերին պալատում անդամ լինելու։ Շոտլանդական ազնուականութիւնը եօթը տարի ժամանակով ուղարկում է իր միջից ընտրած 16 հոգու։ Իրլանդիայի ազնուականութիւնը ուղարկում է 28 պերի, որոնք ընտրւում են ցմահ։ Բացի նրանցից անդամ են նաև Անգլիայի արքեպիսկոպոսները և աւագագոյն եպիսկոպոսները։ Ի նկատի ունենալով այդ կազմը, պէտք է ընդունել, որ լորդերի պալատը մեծ մասամբ բաղկացած է ժառանգական անդամներից։ Շատ բնական է, որ այն մարդիկ, որոնք միայն իրանց ծննդեան շնորհիւ են օրէնսդիրներ դարձել և չունին օրէնսդրին յատուկ ոչ հակումն, ոչ տաղանդ, և ոչ էլ գիտութիւն, պէտք է չափազանց անտարբեր վերաբերուեն իրանց պարտականութիւններին։ Վերին պալատի 500—550 անդամներից նիստերին մասնակցում են միջին թւով 10—12 հոգի և լորդերը իրանց ձայները յաճախ տալիս են իրանց ընկերներին։ Յայտնի է մի դէպք, երբ Վելլինգտոն հերցոգը մի նիստի մասնակցել է 50 ձայնի իրաւունքով։ Այդօրինակ վերաբերմունքի շնորհիւ 1768 թ. լորդերի պալատը իր անդամներին արգելեց ուրիշի ձայներով նիստերին մասնակցելը։ Այստեղ պէտք է աւելացնել և այն, որ լորդերի պալատը կարող է վճիռներ կայացնել երեք անդամների ներկայութեամբ։ Այդ երկու ազնուականների իրաւունքը (երեք անդամից բաղկացած պալատի ձայնից բազմութիւնը) հակառակելու ժողովրդական ներկայացուցիչների պալատի վճիռնե-

ին ստանացոյց է անում վերին պալատի բոլորովին անարդար գոյութեան վրայ, որ բաղկացած է ժառանգական պերերից։ Այդպիսի պալատը կարող է միայն արգելք լինել օրէնսդրութեան բնական զարգացման համար։

Նոյնանման ժառանգական վերին պալատ գոյութիւն ունի նաև Ունգարիայում կամ Մաճառստանում։ Միւս պետութիւններում վերին պալատի անդամները նշանակւում են թագաւորից, [1]) կամ ընտրւում են քաղաքացիներից, բայց ոչ թէ այն կարգով, ինչպիսի կարգով ընտրւում են ստորին պալատի [2]) անդամները, կամ վերջապէս անդամները նշանակւում են զանազան միջոցներով, այնպէս որ վերջի վերջոյ ստացւում է պալատի խառն կազմ։ [3])

Երբ թագաւորն է նշանակում անդամներին, այն ժամանակ վերին պալատը կորցնում է իր ինքնուրոյնութիւնը և կախումն է ունենում գործադիր իշխանութեան գլխաւորից։

Պարլամենտի կէսը իր ձեռքում ունենալով, թագաւորը կարող է հակառակել իր համար ոչ ցանկալի ամեն մի օրէնքին։ Վերին պալատի անդամները ժողովրդից ընտրելու շնորհիւ երկու պալատների կազմի մէջ տարբերութիւն կարող է լինել միայն կամ որևէ ցենզի [4]) հաստատմամբ կամ թէ ընտրութիւնների մի առանձին կարգի շնորհիւ։ Օրինակի համար եթէ հաստատւում է պետական տուրքերի մի որոշ չափ կամ թէ չէ ընտրութիւնները կատարում են ոչ թէ բոլոր ընտրողները և դրա համար նշանակւած ժողովներով։ Այդպիսի պայմաններում կազմի մէջ եղած տարբերութիւնը կլինի կամ շատ աննշան, կամ եթէ հաստատւած կլինի որևէ խոշոր սեպհականութեան ցենզ, այն ժամանակ վերին պալատը բաղկացած կլինի կապիտալիստներից, որոնք այդպիսով արտօնութիւն կստանան մեծացած ազգաբնակութեան նկատմամբ։

Սակայն ազգաբնակութիւնը բաժանւում է ոչ միայն երկու այդպիսի տարբեր, այլ և ուրիշ շատ մասերի։ Եթէ լինի ներկայացուցիչների ոչ թէ մի պալատ, այն ժամանակ պէտք է ստեղծել այնքան պալատներ, որքան խմբերի է բաժանւում ազգաբնա-

---

[1]) Ինչպէս Իտալիայում։ Ծ. Հ.

[2]) Նիդերլանդիա, Նորվեգիա, Ամերիկա, Շվեցարիա և այլն։ Ծ. Հ.

[3]) Իսպանիա և գերմանական տէրութիւններ. Ծ. Հ։

[4]) Ցենզ կոչւում է այն որոշ պայմանը, առանց որի թոյլ չեն տալիս ընտրութիւններին մասնակցելու, օրինակ ընտրողից պահանջում են անշարժ կալուածութիւն, ուսումնարանից աւարտման վկայական և այլն։ Ծ. Հ

կութիւնը, որոնք միմեանց վերաբերմամբ տարբեր շահեր ունին։ Եւ այն ժամանակ կարելի կլինէր հաւատացած լինել, որ հնարաւոր չէին լինիլ ոչ մի բեֆորմ մտցնել գոյութիւն ունեցող օրէնքները փոխելու։ Միևնոյն բանը պատահում է և երկու պալատ եղած դէպքում, բայց միայն փոքր չափով։

Հէնց դրա համար էլ աւելի ուղիղ է մի պալատ ունենալ, բայց միևնոյն ժամանակ աշխատել, որ նա բաղկացած լինի ժողովրդի բոլոր խաւերի ներկայացուցիչներից։ Հարցը կ'վճռի, իհարկէ, մեծամասնութիւնը, բայց ի նկատի կունենան և միւս ձայները։

Աւելի կարևոր է ժողովրդին հնարաւորութիւն տալ, որպէսզի նա ինքը կայացնի վերջնական վճիռը։ Երկրորդ պալատի անպէտքութիւնը կատարեալ ակներև կ'դառնայ, երբ ծանօթանանք պրոպորցիոնալ ընտրութիւնների և ժողովրդական ձայնատուութեան հետ, որոնց մասին մենք քիչ յետոյ կ'խօսենք։

Շատերը ենթադրում էին կազմել երկրորդ պալատ պետական խելք և փորձառութիւն ունեցող մարդկանցից։ Այդպիսի պալատը, ի հարկէ, ժամանակակից պալատներից աւելի լաւ կլիներ։ Բայց դժբախտութիւնը կայանում է նրանում, որ միջոցներ չկան ցոյց տալու, թէ ինչպէս պէտք է տարբերել այդպիսի մարդկանց խելքը և փորձառութիւնը։ Ուրեմն իւրաքանչիւր ընտրող կ'գործի իր կարծիքով։ Բայց չէ՞ որ ստորին պալատի անդամների ընտրութեան ժամանակ ընտրում են անձնական համոզմունքի թելադրութեամբ և այդ ժամանակ, ի հարկէ, ուշադրութիւն են դարձնում և ընտրողի ընդունակութեան, գիտութեան և փորձառութեան վրայ։ Եւ այժմ պետական գիտութիւնների ներկայացուցիչներից շատերը կողմնակից են պարլամենտի երկպալատեան սիստեմին։ Դրա պատճառը այն է, որ մի կողմից նրանց աչքի առաջն է Անգլիայի օրինակը և միւս կողմից Ֆրանսիական կոնվենտի օրինակը։ Արդարացի է, որ Ֆրանսիական մեծ յեղափոխութեան կոնվենտը իր ձեռքում բռնակալական իշխանութիւն ունէր։ Բայց դրա հետ միասին մոռանում են, որ կոնվենտը բռնակալ դարձաւ ոչ թէ նրա համար, որ բաղկացած էր մի պալատից, այլ նրա համար, որովհետև յեղափոխութեան ժամանակ իշխանութիւնը պէտք է միանայ և զօրեղանայ, եթէ այդպիսի ժամանակ երկու պալատ լինի, այն ժամանակ, միևնոյն է, նրանցից մէկն ու մէկը պէտք է կորցնի իր ամբողջ նշանակու-

թիւնը և իշխանութիւնը զիճի միւսին։ Ժողովրդական սարսափների ժամանակ անօգտակար կլինէր որոշել իշխանութեան սահմանները. դա կնշանակէր աւելի վտանգաւոր դարձնել դէպքերի ընթացքը։ Եթէ բնական ընթացքը արգելքների է հանդիպում, այն ժամանակ այդ հոսանքը կամ ընթացքը հեռացնելով աւելի փոթորկալի է դառնում։ Խաղաղ ժամանակը կարիք չկայ բռնակալութիւնից վախենալու, եթէ պալատների ներկայացուցիչները իսկապէս ընտրւել են ամբողջ ժողովրդից, որպէսզի բոլոր շահերը հնարաւորութիւն ունենան իրենց ձայնը տալու։

Այժմ մեզ համար կարևոր է ծանօթանալու համայնքների պալատի կազմի հետ, որ Անգլիայում համարւում է ժողովրդի իսկական ներկայացուցիչը։ Սակայն դրա հետ դժուար է կատարեալ կերպով համաձայն լինել, որովհետև այդ պալատի ընտրութիւններին ամբողջ ժողովուրդը չէ մասնակցում։ Ընտրողներ կամ այսպէս կոչւած ակտիւ քաղաքացիներ են ոչ թէ բոլոր անգլիացի քաղաքացիները, այլ միայն տնատէրները և բնակարան վարձող անգլիացիները, որոնք տարեկան տասը ֆունտ ստերլինգից ոչ պակաս բնակարանի վարձ են վճարում։ Բացի դրանից ընտրողը առնուազն մի տարի մի որոշ տեղ նստակեաց պէտք է լինի, որպէսզի ընկնի ընտրողական ցուցակի մէջ։ Այդ երկու պայմանները բանւորներից շատերին զրկում են ձայն տալու իրաւունքից, որովհետև այդ բանւորները սովորաբար ապրում են էժանագին բնակարաններում կամ նոյն իսկ սենեակներում և յաճախ ստիպւած են իրանց բնակավայրը շուտ շուտ փոխելու։ Ընդհակառակը զանազան շրջաններում ապրող մի քանի տնատէրներ կարող են մի քանի անգամ իրանց ձայնը տալ և այդ բանին շատ է նպաստում այն հանգամանքը, որ ընտրութիւնները Անգլիայում միևնոյն օրը չեն կատարւում։ Իւրաքանչիւր շրջանում ընտրւում է մի պատգամաւոր։ Ընտրւած համարւում է այն անձնաւորութիւնը, որը միւս թեկնածուների հետ համեմատած ձայների մեծամասնութիւն (համեմատական մեծամասնութիւն) է ստանում։ Այդ հանգամանքը հնարաւորութիւն է տալիս մտնել պալատ ձայների աննշան քանակով։

Աւելի ուղիղ է այն կարգը, որ ընդունւած է Ֆրանսիայում և Գերմանիայում, որտեղ ընտրողը պէտք է ձայների բացարձակ մեծամասնութիւն ստանայ, այսինքն ընտրող բոլոր ձայների կէսից աւելին։ Եթէ ոչ որ այդպիսի մեծամասնութիւն չէ

ստացել, այն ժամանակ թեկնածուները նորից են քուէարկւում։ Այդպիսով ընտրութիւնները, իհարկէ, աւելի դիտակցաբար են կատարւում։

Ընտրութիւնները կատարւում են ուղղակի և գաղտնի ձայնատուութեամբ։ Ընտրութիւներին մասնակցելու համար անհրաժեշտ է չափահաս լինելը։

Այդ ընտրութիւններին թոյլ չեն տալիս մասնակցելու մի քանի պերերի, աստիճանաւորների, հոգևորականութեանը և այն մարդկանց, որոնք համայնքներից նպաստ են ստանում։ Ընտրողական իրաւունքի այդ հիմնական պայմանները մատնացոյց են անում այն հանգամանքի վրայ, որ Անգլիան էլ դեռ շատ հեռու է իսկական դեմոկրատիական կազմ ունենալուց։

Դեմոկրատիական տէրութիւններում, որտեղ բոլոր քաղաքացիներն օրէնքով ազատ և հաւասար են, նրանք ամենքն էլ միատեսակ իրաւունք պէտք է ունենան իրանց կարծիքը արտայայտելու և մասնակցելու օրէնսդրական իշխանութեան մէջ։ Դրա համար էլ ներկայացուցիչների դեմոկրատիական ժողովները պէտք է ընտրւած լինին ընդհանուր և հաւասար ձայնատուութեամբ։ Այդպիսի ձայնատուութեան հակառակորդները սովորաբար մատնացոյց են անում այն հանգամանքի վրայ, որ ժողովուրդն իր ամբողջ մասսայով չէ հետաքրքրւում ընտրութիւններով և իբր թէ նրա մի զգալի մասը չէ մասնակցում ձայնատուութեան։ Սակայն այդ հանգամանքը նշանակութիւն չունի, որովհետև այնտեղ, որտեղ ձայն տալու իրաւունքի համար պահանջւում են առանձին պայմաններ, օրինակի համար կարողութեան ցենզ, այնտեղ էլ ընտրողների մի զգալի տոկոս է լինում, որ չէ օգտւում իրեն շնորհած ձայնատուութեան իրաւունքից։ Ախր իսկապէս կարևոր էլ չէ, որ ընտրութիւններին ամբողջ ժողովուրդը մասնակցի, կարևորը միայն այն է, որ ժողովուրդը իրաւունք ունենայ։ Նկատւած երևոյթ է, որ ընտրութիւնները ազգարնակութեան աւելի քիչ են հետաքրքրում, որքան աւելի կանոնաւոր կերպով է ընթանում պետական կեանքը։ Բայց երբ կարգը խախտւում է, երբ փորձեր են անում իշխանութիւնը մեծացնելու և քաղաքացիներին ազատութիւնից զրկելու, այն ժամանակ ժողովրդի հետաքրքրութիւնը աւելի է զօրեղանում և ընտրութիւններն ընտրողների աւելի մեծ տոկոս են գրաւում։

Ցեռոյ ասում են, որ ընդհանուր ձայնատուութեան ժամա-

նակ կապիտալիստները, կղերականները և այլ կուսակցութիւնները կարող են կաշառել քիչ դիտակցութիւն և նիւթականապէս կախում ունեցող մասսային։ Բայց առաջին չէ կարելի ընտրութիւնների ժողովրդական կամքի վրայ ազդեցութիւն ունենալու հնարաւորութիւն ունեցող հարուստներից խուսափելու համար կարողութիւն ունեցող դասակարգի տրամադրութեան տակ այդ օրինակ ազդեցութիւն թողնել։ Զէ՞ որ դա մի ինոյն է, եթէ ասենք. ես վախենում եմ, որ հարուստը կըկաշառի ազքատին և որպէսզի դրանից կարողանանք խուսափել, այդ ազքատին պէտք է զրկել ազդեցութիւնից։ Ցեռոյ վերջին ժամանակների պատմութիւնը ցոյց է տալիս, որ մասսայի դիտակցութիւնը անսովոր արագութեամբ բարձրանում է։

Մենք տպրում ենք մաժուլի, երկաթուղիների և էլեքտրականութեան դարում, որը ժողովրդական մասսային թոյլ է տալիս հեշտութեամբ ճանաչել և քննադատութեան ենթարկել պետական կեանքի անցքերը։

Վերջապէս գոյութիւն ունեն մի քանի իսկական տեխնիքական միջոցներ, որոնք դժւարեցնում են ընտրութիւնների ազատութեան վրայ ճնշումն գործ դնելը։ Դրանցից ամենից առաջ նշանաւոր է գաղտնի ձայնատուութիւնը։ Այդ ձևը սովորաբար կատարւում է փակ ծրարներով, որպէս զի ոչ ոք չկարողանայ իմանալ, թէ ով ո՞ւմ տւեց իր ձայնը։ Ցեռոյ պէտք է հոգ տանել այն բանի մասին, որ ընտրութիւնները կատարւին չշահագրգռւած մարդկանց ձեռքով։ Վերջին ժամանակներս Արևմտեան Եւրոպայում նկատւում է ձգտում այդ գործը դատաստանական իշխանութեանը յանձնելու։

Այդպիսով ընդհանուր ընտրողական իրաւունքի սիստեմը միակ արդարացի սիստեմն է։ Զանազան տեսակի ցենզերը, որոնք ստեղծւած են սահմանափակելու համար, նպատակ ունին արտօնութիւններ ստեղծելու աւելի կարողութիւն ունեցող դասակարգերի համար։ Այդ բոլորովին պարզ է. երբ մէկը ընտրող է (ակտիւ ներգործական իրաւունք), կարող է միայն այն ժամանակ, ով ունի կամ որոշ կարողութիւն, կամ թէ չէ որոշ տուրք է վճարում յօգուտ պետութեան։ Ոչ մի ապացոյց չկայ այն բանի համար, որ աւելի հարուստ մարդը, օրէնսդրութեան համար աւելի ընդունակ է։ Այդպիսի մարդը, ընդհակառակը, կարող է մասամբ շահասէր և հասարակական գործի համար անընդունակ լի-

նել։ Հարկաւոր է ի նկատի ունենալ և այն, որ ներկայումս կապիտալները չափազանց շարժական են և որ միևնոյն մարդը կարող է իր կեանքի զանազան շրջաններում լինել թէ հարուստ և թէ աղքատ։ Այդ ենթադրութիւնը, իբր թէ հարուստ դասակարգերը աւելի են շահագրգռուած պետական կարգապահութեամբ և իբր թէ պետութեան աւելի շատ տուրքեր են տալիս, ոչ մի քննադատութեան չի դիմանում։ Առաջին, որ շատ անգամ պետութեան պաշտպանութեան կարիք ունին աւելի աղքատ դասակարգերը և երկրորդ կապիտալիստները, որոնք պետութեան եթէ փող էլ են տալիս, բայց և միևնոյն ժամանակ նրա ծառայութիւններից աւելի մեծ չափերով են օգտւում, քան մնացած քաղաքացիները։ Վերջապէս լաւ չէ մեկին աւելի շատ իրաւունք տալ, երբ նա պետութեան աւելի շատ տուրք է տալիս, որովհետև պետութիւնը ոչ թէ ակցիոնէրական ընկերութիւն է, որից մեծ բաժնետէրը աւելի շատ է օգտւում։ Պետութիւնը խնդիրներ ունի, որոնք ոչ մի առնչութիւն չունին տնտեսականի հետ։ Բաւական պարզ չէ կրթական ցենզի ընորհիւ ազգաբնակութեան հարուստ խաւերի համար արտօնութիւններ ստեղծելը։ Բայց հարկաւոր է իմանալ, որ ուսում ստանալը մատչելի է աւելի հարուստ մարդկանց և հէնց դրա համար էլ կրթուած դասակարգը միշտ էլ աւելի հարուստ է լինում։ Պահանջել կրթութեան որոշ աստիճան, դրա համար կարելի է միայն այնտեղ, որտեղ պարտադիր է ընդհանուր և ձրի ուսումը։ Օրինակի համար Իտալիայում ընտրողական իրաւունք են վայելում միմիայն գրագէտները։ Սակայն, հաղիւ թէ կարելի լինի կարծել, որ հասարակ գրագիտութիւնը ընտրողին ընտրողական գործում կարողանայ տալ գիտակցութեան աւելի բարձր աստիճան։ Թագուն ցենզ պարունակող սիստեմն է այսպէս կոչուած պլիւրալ ձայնաւորութիւնը, որ գործադրւում է Բելգիայում և Ֆինլանդիայում։ Այդ ընտրութեամբ ընտրողների մի քանի կարգեր ստանում են մի քանի ձայներ։ Այդ ձայները տալիս են կամ աւելի խոշոր տուրքեր վճարողներին կամ որոշ կրթութիւն ստացածներին, կամ վերջապէս ընտանիքների հայրերին։

Ժողովրդական իրաւունքների այդպիսի սահմանափակման են հասցնում և երկաստիճան ընտրութիւնները։ Այդ ընտրութիւնները որոնք իսկապէս կատարւում են տեղական գործերը կառավարելու համար գոյութիւն ունեցող ընտրողական հիմ-

նարկութիւնների միջոցով կամ թէ չէ ընտրութիւնների համար հրաւիրւում են առանձին առաջնակարգ ժողովներ, որոնք իրանց միջից ընտրում են ընտրողներ։ Այդ սիստեմով ժողովուրդը իր հասատութիւններին և ժողովներին կարծես թէ վստահանում է իր նայնը տալով, սակայն վերջինս կարող է բոլորովին փոխուել։ Ընտրողների մէջ աւելի շուտ ընկնում են հարուստ մարդիկ, որոնց միակ ձգտումը երբեմն հին կարգերն և արտօնութիւններ պահպանելն է լինում։ Երբեմն էլ այդօրինակ երկաստիճան և անուղղակի ձայնաւորութեամբ միացնում են և դասակարգային ընտրողների մի առանձին կարգ։ Օրինակի համար Պրուսիայում առաջին ընտրողներն իրանց կարողութեամբ բաժանւում են երկու խմբերի։ Այդ բոլոր խմբերը պետութեան վճարելիք իրանց տուրքերով պէտք է միմեանց հաւասար լինին։ Նրանցից իւրաքանչիւրը ընտրում է ընտրողների երրորդ մասը։ Այդպիսով ամենահարուստ խմբում կլինի մարդկանց մի փոքր թիւ, որը իրաւունք կստանայ նոյնքան ընտրողներ ընտրելու, որքան և ստորին և աւելի բազմամարդ խումբը։ Պարզ է, որ այդտեղ գնահատում են ոչ թէ մարդուն, այլ կապիտալին։

Անգլիայում կարողութեան ցենզի հաստատելով, պէտք է խոստովանել, որ այնտեղ ժողովրդի ներկայացուցչութեան մէջ մինչև այսօր էլ քաղաքացիները հաւասարութիւն չեն ձեռք բերել։ Այնտեղ կանայք էլ ձայնաւորութեան իրաւունք չունին, չնայելով որ կանանց ընտրողական իրաւունքի համար վաղուց են պրոպագանդա անում։ Մինչև այժմ էլ հնազանդ սովորութիւնների կողմնակիցները մարդկային ցեղի ամբողջ կէսին քաղաքական իրաւունքից զրկելը արդարացնում են միամիտ ենթադրութիւններով, իբր թէ ի նկատի ունենալով կնոջ կոչումը, նրանց առաջարկում են միխիթարւել նրանով, որ ժողովուրդների այդպիսի վիճակը «աւելի շուտ բղխում է կնոջ հոգու և երևխաների փայլուն աչքերի անտեսանելի ազդեցութիւնից, քան քաղաքական շուկայի խառնիճաղանճ ժողովրդից»։ Այդօրինակ ենթադրութիւններով կարելի է արդարացնել և ամեն տեսակի սորկութիւն, հաւատացնելով, որ սարուկը ունի «անտեսանելի» ազդեցութեան հնարաւորութիւն։ Սակայն դաժան իրականութիւնը ամեն տարի կանանց աւելի մեծ քանակութեան է ստիպում ինքնուրոյն աշխատանքի կեանք վարելու և աւելի ուղիղ ու ճշմարիտ միջոցնե-

բով իրականացնելու իրանց մարդկային և քաղաքացիական իրաւունքները, քան աչքերի և հոգու ազդեցութիւնը։

Անհրաժեշտ է այստեղ յիշատակել և կոմոնների[1]) լիազօրութիւնների չափազանց երկար ժամանակամիջոցը։ Եօթ տարուայ ընթացքում ժողովրդի տրամադրութիւնը կարող է տարբերուել ներկայացուցիչների տրամադրութիւնից։ Այդպէս էլ պատահում է Անգլիայում, որտեղ ստորին պալատը սովորաբար արձակւում է ժամանակամիջոցը լրանալուց առաջ։

Բայց եթէ համայնքների պալատը դեռ ևս չէ ներկայացնում Անգլիական ամբողջ ժողովուրդը, այնուամենայնիւ նա հանդիսանում է իբրև միակ օրգանը, որի շնորհիւ լսւում է ժողովրդի ձայնը։ Դրա համար էլ պարլամենտում առաջնորդող նշանակութիւն ունի ստորին պալատը. լորդերը վաղուց են ճանաչել այդ պալատի հեղինակութիւնը և խոյս են տալիս նրա հետ ընդհարուելուց։ Ասենք եթէ պեթերը նոյն իսկ չցանկանային էլ ժողովրդի ձայնը լսել, սակայն կառավարութեան ձեռքում միջոց կայ ստիպելու նրանց հնազանդեցնելու։

Հասարակական կարծիքի ազդեցութեան տակ թագաւորը միշտ կարող է պերերի ատաիճանի բարձրացնել քաղաքացիների այնքան քանակութիւն, որ վերջին պալատում համայնքների պալատին համաձայն մեծամասնութիւն ստացւի։ Յետոյ, ինչ վերաբերում է պետական եկամուտներին և ծախսերին, օտար պետութիւնների հետ ունեցած դաշնագրութիւններին, որոնք կապուած են նիւթական պարտադրութիւնների հետ, մի խօսքով այն բոլորը, ինչ որ շօշափում է ժողովրդական միջոցներին, բոլորն էլ բացառապէս կախուած է ստորին պալատից։ Այդպիսով կոմոնները միշտ կարող են հասնել իրանց նպատակին, մերժելով պետական կարիքների համար փող տալու։ Պարլամենտում ստորին պարլամենտի գերակշռութիւնը այնպէս հաստատուած է, որ միայն նրա տեսութիւնը կարող է մինիստրութեան անկում առաջ բերել, որը միայն նրա ցանկութեան համաձայն է ընտրւում։

Մնացած բոլոր բաներում երկու պալատները հաւասար են համարւում և օրէնքների նախագծերը կարող են անխտիր երկու պալատներն էլ մտնել։ Բացի պալատների անդամներից, օրէնքների նախագծեր առաջարկելու իրաւունքով (այսպէս կոչ-

[1]) Անգլիայի համայնքների պալատի անդամները կոչւում են կոմոներ։ Ծ. Հ.

ւած օրէնսդրական նախաձեռնութեան իրաւունք) օգտւում են նաև մինիստրները։ Քանի որ մինիստրներին աւելի, քան մի ուրիշին, յայտնի է հին օրէնքների գործադրութեան անյարմարութիւնը, դրա համար էլ մինիստրութիւնն է առաջարկում նոր օրէնքների մեծ մասը պալատ։ Նրանք շարունակ ներկայ են պալատներում, իսկ արդարադատութեան մինիստրը, այսպէս կոչւած լորդ-կանցլերը նախագահում է վերին պալատում։ Թագաւորն իրաւունք չունի մասնակցելու պարլամենտի նիստերին, բացի նրա բացումից մի գահական ճառով, որին պալատը պատասխանում է իր ցանկութիւնը արտայայտող մի գրութեամբ։ Երբ մինիստրութիւնը չէ համակրում գահական ճառի մէջ արտայայտւելիք ենթադրութիւններին, պէտք է հրաժարական տայ։

II

Անգլիական պարլամենտական միապետութեան համայնքների պալատի ղեկավարող նշանակութիւնը լուսաբանելուց յետոյ կարող ենք անցնել Ֆրանսիական Հանրապետութեան պարլամենտական կազմակերպութեան քննութեան։ Այստեղ պատահում ենք պետութեան աւելի լայն ատաիճանի դեմոկրատացման ժողովրդականացման։ Դրա գլխաւոր արտայայտութիւնն է՝ ընդհանուր ձայնատուութիւն, պետութեան գլխի ընտրուիլը և վերին պալատի կազմի ընտրովի անդամներից բաղկանալը։

«Հանրապետութիւն» անունը ցոյց է տալիս, որ այնտեղ պոյութիւն չունի պետական ժառանգական իշխանութիւնը։ Ընդհակառակը բոլոր իշխանութիւնները իրանց լիազօրութիւնները ստանում են ժողովրդից, որը և միակ վեհապետն է հանդիսանում։ Հէնց դրանից է որ միապետի փոխարէն այստեղ պատահում ենք հանրապետութեան նախագահին, որ ընտրւում է եօթ տարով։ Յետոյ մնացած բաներում նրա իշխանութիւնը թագաւորի իշխանութիւնից պակաս չէ։ Մի քանի պետութիւններում նախագահի իշխանութիւնը թագաւորի իշխանութիւնից պակաս չէ։ Մի քանի պետութիւններում նախագահի իշխանութիւնը թագաւորական իշխանութիւնից նոյն իսկ մեծ է, օրինակի համար Հիւսիսային-Ամերիկայի Միացեալ-Նահանգներում։ Սակայն իշխանութեան հէնց ընտրովի լինելը փոխակերպում է նրա բնաւորութիւնը։ Միապետը օրէնքով չէ կարող հեռացնել։ Նախագա-

հը իր ժամանակամիջոցը լրացնելուց յետոյ երկրորդ անգամ կարող է չընտրուել և հենց այդ հանգամանքն էլ նրան դնում է կախուած դրութեան մէջ։ Սակայն Ֆրանսիայի պետական կազմակերպումը ըստ իր էութեան շատ նման է Անգլիայի կազմակերպութեան, որովհետև թէ այստեղ և թէ այնտեղ գլխավորող դերը պատկանում է պարլամենտին։

Ֆրանսիայում Ստորին պալատը պատգամաւորների պալատն է, իսկ վերինը՝ սենատը։ Սրանք մշակում են օրէնքներ, քուէարկում են բիւջէն, վճռում են պատերազմի հարցը և հաստատում են օտար տէրութիւնների վերաբերմամբ դաշնադրութիւններ։ Ինչպէս Անգլիայում, այնպէս էլ այստեղ նախագահ—մինիստրը հանրապետութեան նախագահի յանձնարարութեամբ կազմում է մինիստրների կաբինետը, որը ընտրում է պալատի մեծամասնութիւնից։ Մինիստրները պարլամենտի առաջ նոյնպիսի պատասխանատուութիւն ունին և նախագահի անունից եղած բոլոր գործողութիւնների համար պահանջում է նրանց ստորագրութիւնը։ Թագաւորի նման նախագահն էլ պատասխանատու չէ եօթնամեայ ժամանակամիջոցի իր լիազօրութիւնների համար, բացառութեամբ միայն հայրենիքին դաւաճանելու դէպքի։ Նա իրաւունք ունի անձամբ նախագահելու մինիստրների խորհուրդում և այդպիսով ազդել նրանց որոշումների վրայ։ Նա է տնօրինում զօրքերին և հանդիսանում իբրև պետութեան ներկայացուցիչ օտար պետութիւնների հետ յարաբերութիւններ ունենալիս։ բայց նա իրաւունք ունի միայն խաղաղութիւն կնքել և ոչ թէ պատերազմ հրատարակել։

Օրէնսդրութեան շրջանում նա նախաձեռնութեան իրաւունք ունի, բայց նրան չէ վերապահուած օրէնքների հաստատումը։ Նա լոկ ժամանակաւոր veto-ի իրաւունք ունի. եթէ նախագահը համաձայն չէ նոր օրէնքի հետ, այն ժամանակ այդ օրէնքը նրա արած նկատողութիւններով վերադարձնում են պալատին, բայց եթէ պալատն իր կարծիքը չդրեց, այն ժամանակ այդ օրէնքը ոյժ է ստանում և երեք օրւայ ընթացքում հրատարակւում։ Նախագահը կարող է սենատի համաձայնութեամբ արձակել պատգամաւորների պալատը։ Նա իրաւունք ունի պարլամենտի սեսեան՝ նստաշրջանը կանգնեցնելու, բայց ոչ աւելի, քան մի ամսով, և այն էլ ամբողջ սեսիայում երկու անգամից ոչ աւելի։ Սակայն նրան չէ վերապահուած սեսեան բանալու իրաւունքը։

Օրէնքի ոյժով պալատները պէտք է ժողովւեն իւրաքանչիւր տարւայ յունուար ամսի երկրորդ երեքշաբթի օրը և շարունակել իրանց սեսեան հինգ ամսից ոչ պակաս։ Հետևապէս և նախագահը չէ կարող պարլամենտի նիստերի բացումը արգելել։ Նախագահը օգտւում է ներման իրաւունքով և մինիստրներին կարող է յանձնել սենատի դատարանին։

Նախագահն ընտրւում է ազգային ժողովով կամ կոնգրէսով, որ կազմւում է երկու պալատների միացումից։ Պետութեան տեսանելի գլխի ընտրութիւնը պալատների անդամների և ոչ թէ ժողովրդի ձայնով Ֆրանսիայում հաստատուել է նախագահին չափազանց մեծ ոյժ տալու երկիւղից։ Ժողովրդից ընտրւելով, նախագահը կարող է նոյնքան, նոյն իսկ աւելի ձայներ ստանալ, քան բոլոր պատգամաւորները միասին վերցրած։ Այդ բանը նրան այնքան հեղինակութիւն կտայ, որ կարող է վտանգաւոր դառնալ մի մարդու ձեռքում, որ բացի դրանից պետութեան զինուորական ոյժի տնօրէնն է։ Այդ բանը հաստատուեց Ֆրանսիայի պատմութեամբ յանձին Նապոլեոն Գ-ի, որ տապալեց հանրապետութիւնը, նրա նախագահը լինելով։

Ինչ վերաբերում է պալատներին, նրանցից ստորինը ընտրւում է ընդհանուր, անմիջական և փակ ձայնատուութեամբ։ Իւրաքանչիւր շրջան ընտրում է մի պատգամաւոր. եթէ որևէ շրջանում 100,000-ից աւելի բնակիչ կայ, այն ժամանակ այդ շրջանը բաժանւում է երկու մասի։ Ընտրելու իրաւունքով (ակտիւ ընտրողական իրաւունք) օգտւում են տղամարդիկ, որոնք իրաւունքներից չեն զրկւած, ունեն որոշ բնակատեղի և 21 տարեկանից պակաս չեն։ Սակայն ընտրւողները (պասսիւ ընտրողական իրաւունք) 25 տարեկանից պակաս չըպէտք է լինին։ Ընտրութեան ժամանակամիջոցը չորս տարի է։ Ներկայումս սենատը կազմւում է ընտրւած անդամներով։ Նրանք ընտրւում են 9 տարով, միայն թէ երեք տարին մի անգամ սենատի անդամների կամ սենատօրների մի երրորդականը հերթով դուրս է գալիս։ Այդ բանը սենատի կարծիքներին կայունութիւն է տալիս, նրա տրամադրութիւնը երկրի տրամադրութեան փոխուելուց յետոյ իսկոյն չէ փոխւում։ Սենատը ընտրւում է առանձին կոլլեգիանների միջոցով Ֆրանսիայի դեպարտամենտներում և գաղութներում։ Այդ կոլլեգիաների մէջ են մտնում իւրաքանչիւր դեպարտամենտի պալատի բոլոր պատգամաւորները, տեղական գլխաւոր խորհրդի

և շրջանային խորհրդների անդամները և մունեցիպալ խորհրդներից ընտրված անդամները։ Այդպիսով որպէս զի մէկը կարողանայ անդամ դառնալ, տոհմը և հարստութիւնը նշանակութիւն չունի։ Պէտք է միայն 40 տարեկան լինել և ընտրուած լինել այնպիսի մարդկանցից, որոնք տեղական հաստատութիւնների կազմի մէջ են գտնուում։ Այդպիսի մարդիկ աւելի հակուած են լինում դէպի չափաւոր թիորիաների և կը պաշտպանեն գոյութիւն ունեցող դրութիւնը։

Այդ պահպանողականութիւնը պէտք է երաշխաւորի առաջխաղաղացութեան մտածողութիւնը և չափաւորի ժողովրդի անմիջական ներկայացուցիչների՝ պատգամաւորների իշխանութիւնը։ Այդպիսով սենատը ըստ էութեան օրէնսդրութեան զարգացման լոկ մի արգելք է։ Բայց չունենալով բացառապէս տոհմային և կապիտալիստական արիստոկրատիային յատուկ դասակարգային ընաւորութիւն, սենատը համեմատաբար շատ հազուագիւտ դէպքերում միայն տրտունջների տեղիք է տալիս և հէնց դրա համար պատգամաւորական պալատի նկատմամբ գրեթէ հաւասար նշանակութիւն ունի։ Դրա համար էլ մինիստրների հետ ընդհարման դէպքերում սենատի արտայայտած անվստահութեան հետևանքը մինչև այժմ եղել է մինիստրութեան իշխանութիւնից հեռանալը։

Այդ բանը չէ կարելի տրամաբանական համարել, որովհետև վերին և ներքին պալատի կողմից դէպի մինիստրները տարբեր վերաբերմունքի ժամանակ, ընդհարումն անցնում է և պալատներին և նորմալ կեանքը դադարում է։ Բարձր ազնուականների պալատները Անգլիայում մի մնացորդ է արտօնութիւնների, որոնք դեռ ևս չեն մաքրուած նոր ժամանակի ազատարար հոսանքներով։ Ֆրանսիայում սենատը պահպանուում է այն փոթորկալի անցքերի կրկնուելու երկիւղի շնորհիւ, որոնք տեղի ունեցան Ֆրանսիայում մեծ յեղափոխութիւնից սկսած, ամբողջ XIX դարու ընթացքում։

Պատգամաւորական պալատը սենատի վերաբերմամբ այն առաւելութիւնը ունի, որ հետևեալ տարբայ պետական ծախսերի նախահաշիւը (բիւտճէն) և բացի դրանից ֆինանսական բեֆորմները նախ պէտք է առաջարկեն պատգամաւորական պալատը։

Որովհետև անգլիական սահմանադրութիւնը հետզհետէ առաջ է եկել թագաւորական իշխանութեան և արտօնեալ դասակարգերի զիճումներից, դրա համար էլ այնտեղ գոյութիւն չունի սովորական «օրէնսդրական» և այսպէս կոչուած «սահմանադիր» իշխանութեան տարբերութիւն։ Վերջին իշխանութեան էութիւնը հիմնական օրէնքներ հաստատելու իրաւունքն է։ Այդպիսի օրէնքներին են վերաբերուում պետական կազմակերպութեան ձևին, իշխանութիւնների փոխադարձ յարաբերութիւններին, պետութեան քաղաքացիների իրաւունքներին վերաբերող հարցերը և այլն։ Օրինակի համար 1875-թի փետրուարի 25-ին ընդունուեց սահմանադրական այն օրէնքը, որի հիմամբ հանրապետական ձևը անփոփոխելի յայտարարուեց։

Այդպիսով սահմանադրական օրէնքները վերաբերուում են սովորական օրէնքներին, ինչպէս վերջիններս կառավարութեան կարգադրութիւններին։ Կարգադրութիւնները պէտք է օրինական լինին, օրէնքները սահմանադրական, այսինքն չը պէտք է հակասեն սահմանադրութեան։ Դրա համար էլ սահմանադիր իշխանութիւնը որ սահմանում է ժողովրդի պետական կեանքի հիմքերը, պէտք է ամենայն շրջահայեցողութեամբ, վստահուած լինի. բնական է, որ այն պետութիւններում, որտեղ ժողովուրդն ինքը չէ ստեղծում սահմանադրութիւնը, սահմանադիր իշխանութիւնը պէտք է յանձնուի այնպիսի մարդկանց, որոնք յատկապէս դրա համար ընտրուել են սահմանադիր ժողովին մասնակցելու։ Սակայն, ըստ ֆրանսիական սահմանադրութեան, այդ ժողովը կազմուում է պալատի և սենատի միացումից, ազգային ժողով կամ կոնգրէս անուանով։ Նոյնպիսի ժողով է կազմուում նաև հանրապետութեան նախագահ ընտրելու համար։ Հարկաւոր է յիշել և այն, որ Ֆրանսիայում ինչպէս պատգամաւորները, այնպէս էլ սենատորներն իրանց պարտականութիւնները կատարելու համար որոշ սոճիկ են ստանում։ Այդ հանգամանքը չափազանց կարևոր է, որովհետև այլ կարգերի ժամանակ (ինչպէս Անգլիայումն է) ժողովրդի հնարաւոր ներկայացուցիչների թուից կամայ ակամայ կհանուի ամեն մարդ, ով որ չէ կարող ապրել առանց աշխատանքի, որով և ժողովրդական ներկայացուցչութիւնը իսկապէս ընկնում է հարուստ դասակարգերի ձեռքը։

Օրէնսդրական պալատների կազմակերպութեան և ժողովրդական ներկայացուցիչների ընտրութեան եղանակի այդ բոլոր յատկութիւնները, ինչպէս առաջ յիշեցինք, մատնացոյց են անում Ֆրանսիայի կառավարութեան աւելի դեմոկրատիկ ժողովրդական

ներկայացուցչութեան վրայ։ Բայց որպէս զի նա իսկական դեմոկրատիայի (ժողովրդապետութեան) վերածուի, պէտք է դեռ բեֆորմների մի երկար ճանապարհ անցնի։ Իսկ ամենից առաջ դեռ շատ բան կայ անելու, որպէս զի Ֆրանսիայի ընդհանուր ընտրողական իրաւունքը իսկապէս ընդհանուր դառնայ։

Դրա հետ միասին հարց է ծագում, որ նոյն իսկ որևէ ցենզի բացակայութեան դէպքում ժողովրդական ներկայացուցչութիւնը իրօք ժողովրդի միայն այն մասի ներկայացուցչութիւնն է, որը ընտրութիւնների ժամանակ ձայների մեծամասնութիւն է ստանում, իսկ փոքրամասնութիւնը մնում է առանց ներկայացուցչի։ «Մեծամասնութիւնը թագաւոր է», ասում են ներկայացուցչական կառավարութիւն ունեցող երկրներում և այստեղ ուրիշ երբ չկայ, որովհետև ակնյայտնի է, որ աւելի արդարացի է որև է օրէնք ընդունել ժողովրդի մեծամասնութեան, քան նրա փոքրամասնութեան շահերը ի նկատի ունենալով։ Սակայն պէտք է և համաձայնուել, որ այդ օրէնքը ընդունելուց առաջ նրան պէտք է ամեն տեսակէտից քննել։ Դրա համար էլ պէտք է աշխատել, որ մեծամասնութիւնը ուշադրութիւն դարձնի փոքրամասնութեան արդարացի պահանջների վրայ։

Այստեղից պարզ երևում է, որ անհրաժեշտ է օրէնսդրական ժողովներում փոքրամասնութեանն էլ ներկայացուցչութիւն տալ։ Ժողովուրդը միայն այն ժամանակ կարող է իսկական ներկայացուցչական կառավարութիւն ունենալ, երբ պալատում կը լինեն այնպիսի պատգամաւորներ, ընտրուած ազգաբնակութեան բոլոր խմբերից, նրանցից իւրաքանչիւրի թւի համապատասխան։ Դրա համար էլ պէտք է անցնել այսպէս կոչուած պրոպորցիոնալ ընտրութիւններին, այսինքն այնպիսի ընտրութիւններին, որի ժամանակ որև է կուսակցութիւնից հինգ անգամ աւելի մեծ կուսակցութիւն հինգ անգամ էլ աւելի ներկայացուցիչներ է ստանում, սակայն այդ կուսակցութիւնից և ոչ մէկը ներկայացուցչութիւն ունենալու իրաւունքից չէ զրկւում։ Այդ օրինակ ընտրութիւնների ժամանակ, սակայն չափազանց դժուարութիւններ են առաջանում։ Օրինակ հին աւստրիական սիստեմին նման սիստեմով ներկայացուցիչները առանձին առանձին են ընտրւում 1) խոշոր հողատէրներից, 2) քաղաքային բնակիչներից, 3) առևտրաարդիւնաբերական պալատներից և 4) հողագործներից. այդ սիստեմը հիմնուած է աւելի ազդեցիկ դասակարգերի հին արտօնու-

թիւնների վրայ, և միևնոյն ժամանակ ունի այն հիմնական պակասութիւնը, որ նրա բաժանումն ի նկատի ունի բացառապէս տնտեսական տարբերութիւններ։ Բացի դրանից կեանքի մէջ առանձին խմբերը միշտ կերպարանափոխւում և անյայտանում են և միշտ միևնոյնը չեն մնում։ Դրա համար էլ այժմ առաջարկութիւն են անում թոյլ տալու, որ կեանքի ընթացքում բնականաբար գոյացող զանազան կուսակցութիւնները ներկայացնեն իրանց ներկայացուցիչների անուանացուցակը։

Մէկ կամ միւս ցուցակի յաղթանակի համար էլ լինում է այդպիսի դէպքերում ընտրողական պայքարը։ Պրոպորցիոնալ ներկայացուցչութեան տեխնիքական հնարաւորութեան հարցը չափազանց բարդ է և նրա իրագործման համար մշակուած զանազան սիստեմների վերլուծութիւնը այստեղ շատ տեղ կը բռնէր։ Դրա համար էլ ես ստիպուած եմ չքննելու այդ սիստեմները, մանաւանդ, որ ներկայ զրքոյկիս նպատակն է պետական կազմակերպութեան սկզբունքների և ոչ թէ նրա տեխնիքական միջոցների վերլուծութիւնը։ Բացի դրանից պէտք է 'ի նկատի ունենալ և այն հանգամանքը, որ մինչև այսօր պրոպորցիոնալ ներկայացուցչութեան համար դեռ ես որև է լուրջ փորձ չէ եղել։ Այստեղ իբրև օրինակ միայն ժամանցոյց կանեմ 1886 թ. Սերբիայում ընդունուած պրոպորցիոնալ ներկայացուցչութեան սիստեմի վրայ։ Ընտրելու համար պահանջւում է, որ ներկայացուցիչը պէտք է ձայների այն թիւն ստանայ, որ ստացւում է բոլոր ընտրողների թիւը ընտրուելիների թւի վրայ բաժանելուց։ Եթէ ընտրողների թիւը հասնում է մէկ միլիոնի, իսկ ընտրուելիները՝ երկու հարիւր, այն ժամանակ ընտրելու համար պէտք է ստանալ հինգ հազար ձայն։

Այնուհետև ընտրողների 50 հոգին կարող են իբրև ներկայացուցիչների իրանց թեկնածուներին առաջարկել։ Ընտրութիւնների օրը այնքան քուէտուփեր են դնում, որքան առանձին ցուցակներ են ներկայացուած։ Ընտրողները իրանց քուէն ձգում են այն տուփի մէջ, որոնց վրայ գրուած է իրանց համար ամենից համակրելի ցուցակը։ Ձայները հաշուելիս իւրաքանչիւր ցուցակից ընտրուած է համարւում այնքան ներկայացուցիչ, որքան անգամ որ քուէտուփում ընտրելու համար անհրաժեշտ ձայների թիւ է լինում։

Պրոպորցիոնալ ընտրութիւնների միւս սիստեմները գործադրւում են Դանիայում, Իտալիայում և Իսպանիայում։

Ինչ վերաբերում է ընդհանուր ընտրողական իրաւունքին, որը ընդունուած է Արևմտեան Եւրոպայի և Ամերիկայի ամենանշանաւոր պետութիւններում, այդ դէպքում փոքրամասնութիւնը ներկայացուցիչներ է ստանում միմիայն այն շրջաններում, որտեղ պատահաբար նրա կողմակիցները թւով շատ են մեծամասնութեան կողմնակիցներից։ Սակայն ներկայացուցչութեան այդ անկանոնութիւնից զատ ակտիւ քաղաքացիների թիւը ամբողջ ազգաբնակութեան կէսից շատ քէչ է լինում։ Սովորաբար երկրի ամբողջ ազգաբնակութեան մի քառորդից պակաս է լինում։ Այդ բանը ծագում է հետևեալ պատճառներից։ Նախ և առաջ, Հիւսիսային-Ամերիկայի մի քանի նահանգների բացառութեամբ, ընտրողների թւից հանում են ազգաբնակութեան կէսը, որովհետև կանանց թոյլ չեն տալիս ձայն տալու։ Բայց մնացած կէսից էլ սովորաբար ընտրողական իրաւունքից չեն օգտւում մի շարք մարդիկ։ Օրինակի համար 1) Պետութեան տերիտորիայի վրայ ապրող բոլոր օտարերկրացիները. 2) Անչափահաս մարդիկ և կամ օրէնքում յատկապէս նշանակուած հասակը չունեցողները. 3) յանցաւորութեան (գլխաւորապէս այսպէս կոչուած ամօթաբեր յանցաւորութիւնները) մի քանի տեսակների համար դատապարտուածները. 4) սնանկացած մարդիկ, երբեմն էլ վատնող մարդիկ 5) համայնքներից նպաստ ստացածները՝ աղքատները. 6) Զինուորական և քաղաքացիական ծառայութեան մէջ գտնուող անհատները և այլն։ Այդ տեսակի սահմանափակումները հաստատուած են կամ նրա համար, որ անհատների մի որոշ դաս առհասարակ ճանաչուած է իբրև անընդունակ ընտրութիւնների մասին ճիշտ կարծիք ունենալու. այդ կարգին են պատկանում բոլոր անչափահասները, օտար-երկրացիները, որոնք սերտ կերպով չեն կապուած այն պետութեան հետ, որտեղ նրանք ապրում են. կամ թէ չէ նրա համար, որ մի քանի անհատների դրութիւնը նրանց զրկում է անկախութիւնից կամ ինքնուրոյնութիւնից. այդպիսի դրութեան մէջ են գտնւում զինուորականները, ատիճանաւորները, ծառաները և այլն։ Սակայն, եթէ արդարացի է, որ ներկայացուցչութիւնից պէտք է օգտւեն ժողովրդի բոլոր տարրերը, այն ժամանակ հաղիւ կարելի լինի ընդունել այդ հաստատուած սահմանափակումներից շատերի անպայման անհրաժեշտութիւնը։ Վերցնենք

յանցաւորներին։ Զկան այնպիսի արտաքին նշաններ, որոնց հիման վրայ կարելի լինէր ցոյց տալ, որ այս ինչ անձնաւորութիւնը, հոգեպէս նորմալ մնալով, կորցրել է ընտրութիւնների համար իր ընդունակութիւնը։ Բացի դրանից օրէնքն և բարոյականութիւնը յաճախ չեն զուգատիպւում։ Յետոյ վատնգաւոր է ժողովրդի մէջ ստեղծել իրաւազուրկ անհատների մի կատեգորիա, որովհետև հէնց այդ մեկուսացումը նրանց տանում է դէպի աւելի սուր թշնամութիւն հասարակութեան վերաբերմամբ։ Յանցագործութիւնների շատ տեսակները, որ ներկայ ժամանակում համարւում են ամօթաբեր, ծնւում են սոցիալական կարգերի թերութիւնից։ Օրինակի համար աշխատաղրկութիւնը նպաստում է գողութիւնների շատանալուն։ Նա ոճրագործութիւնների ճանապարհի վրայ է դնում այնպիսի մարդկանց, որոնք մինչև այդ ժամանակ պատւաւոր աշխատանքով էին ապրում։ Դրա համար էլ ոճրագործները՝ պետական կարգերի թերութիւնների այդ արտաքին նշանները, պէտք է ձայնի իրաւունք ունենային։ Եւ չի կարելի հաշի չառնել այն հանգամանքը, որ նրանք կարող են այնքան շատ լինել, որ կը կարողանան էապէս թեքել մի կողմ ընտրողական ոյժերի հաւասարակշռութիւնը։ Աւելի արդարացի կլինէր հեռացնել այն մարդկանց, որոնք արդէն ցոյց են տուել իրանց անընդունակութիւնը մասնակցելու ընտրութիւններին իրանց մի քանի յատուկ յանցանքներով. այդպէս են օրինակի համար ուրիշների ձայներ գնողները և իրանց ձայները ծախողները։ Բայց եթէ չէ կարելի բացատրել, որ յանցաւորներն էլ ունին կանոնաւոր կարծիք, անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել նրանց դրութեան վրայ։ Հէնց դրա համար էլ բանտարկեալները, որոնց վրայ վարչութիւնը միշտ հնարաւորութիւն ունի ճնշումն գործ դնելու, հաղիւ թէ ընդունակ համարւեն իրանց ձայնը ազատօրէն կարգադրելու։ Բայց անկասկածելի է և միւս կողմից, որ հսկողութեան տակ գտնւող անհատներն աւելի շատ կախումն ունին, քան թէ յանցանքի համար արդէն պատիժ կրողները։ Սակայն հսկողութեան տակ գտնւողներին ձայնատուութիւնից զրկելը կարող է կառավարութեանը յաճախակի առիթներ տալ իր իշխանութիւնը ի չարն գործադրելու, որը ընտրութիւնից առաջ կարող է անհիմն մեղադրանքներ բարդել այս կամ այն ազդեցիկ մարդկանց վրայ։ Այդ օրինակով կարելի է համոզուել, թէ որքան բարդ է այդպիսի սահմանափակումների հարցը։ Սակայն այդօրինակ սահմանափա-

կուճեր են տեղի ունենում բոլոր երկրներում, ի թիւս որոց և Ֆրանսիայում։

Վերջապէս հարկաւոր է ժամանցոյց անել ընտրողական գործում ընտրողական շրջանների հարցի մեծ կարևորութեան վրայ։ Արդեօք երկիրը պէտք է ընտրողական մի շրջան ներկայացնի, որի ազգաբնակութիւնը միասին ընտրում է իր բոլոր ներկայացուցիչներին, թէ ընդհակառակը պետութիւնը պէտք է բաժանուած լինի մի քանի աւել կամ պակաս մեծ շրջանների, որոնցից իւրաքանչիւրը ընտրում է մի քանի ներկայացուցիչներ, կամ թէ չէ ընտրողական շրջանները պէտք է այնքան փոքրիկ լինեն, որպէսզի նրանցից իւրաքանչիւրը մի ներկայացուցիչ ունենար։ Ընտրողական մեծ շրջաններում ընտրութիւնները պակաս գիտակցութեամբ են կատարւում ոչ միայն նրա համար, որ շատ մարդիկ պէտք է ընտրել, այլև նրա համար, որովհետև ընտրուածները, որոնց վրայ կենդրոնանում է մեծ շրջանի ուշադրութիւնը, հեռու են գտնւում իրանց ընտրողներից։ Իսկ միւս կողմից պէտք է ինկատի ունենալ և այն հանգամանքը, որ ընտրողական մանր շրջաններում շատ անգամ պալատի անդամներ են ընտրւում անընդունակ և անգոյն ներկայացուցիչներ, որոնք ազդեցութիւն են վայելում միմեայն իրանց տեղում։

Ընդհակառակը մեծ շրջաններում կարող են ազդեցութիւն ձեռք բերել իրանց տաղանդով և գիտութեամբ անհամեմատ աւելի աչքի ընկնող անհատները. միւս կողմից մանր շրջանները տալիս են ներկայացուցիչների աւելի բազմապիսի կազմ։ Հետևանքները, որոնք բղխում են ընտրողական շրջանները այս բաժանելուց, ձայնատուութեան այս կամ այն սիստեմի դէպքում, չափազանց բազմաթիւ և բարդ են։ Օրէնսդրութիւններն էլ մինչև այժմ դրանց նկատմամբ մի հաստատուն վերաբերմունք չեն որոշել։ 1885 թ. Ֆրանսիայում մտցրին ընտրողական աւելի խոշոր շրջաններ և ցուցակներով ընտրութիւններ (Scrutin de liste)։ Սակայն 1889 թ. Ֆրանսիան նորից ընդունեց անհատական ընտրութիւնները ընտրողական մանր շրջաններով, որոնցից իւրաքանչիւրը ընտրում է մի պատգամաւոր։ Պէտք է ուշադրութիւն դարձնել և այն հանգամանքի վրայ, որ ընտրողական շրջանների սահմանները այսպէս կամ այնպէս որոշելով, կարելի է արհեստական կերպով այնպէս անել, որ փոքրամասնութիւնը հնարաւորութիւն ստանայ ներկայացուցիչների մեծամասնութիւն ու-

դարկելու։ Կառավարութիւններն էլ այդ միջոցից օգտւել են պալատներում իրանց ազդեցութեան գերակշռութիւն տալու։ Դրանից բղխում է անհրաժեշտութիւն ընտրողական շրջանները օրէնսդրական կարգով սահմանելու։

Ինչ վերաբերում է ընտրելու իրաւունքին (կրաւորական ընտրողական իրաւունք), դրա վերաբերմամբ սահմանափակումները աւելի քիչ են, որովհետև ընտրողների շրջանը առաջուց սահմանափակելով, օրէնքը հէնց դրանով էլ ազդում է նրանց ընտրելիների սահմանափակման վրայ։ Սակայն իրաւունք սահմանափակելու մի տեսակը շատ անգամ վերաբերում է ընտրողներին. նրանցից սովորաբար պահանջւում է աւելի մեծ չափահասութիւն, քան թէ ներգործական քաղաքացիներից։ Օրինակի համար Ֆրանսիայում և Գերմանիայում որպէսզի մէկը ընտրի, պէտք է 25 տարեկան լինի, մինչդեռ ընտրելու իրաւունք ունին արդէն 21 տարեկան մարդիկը։ Անգլիայում արհատը թէ կրաւորական և թէ ներգործական ընտրողական իրաւունքի համար պէտք է լինի ամենաքիչը 21 տարեկան։ Ֆրանսիայում բացի դըրանից զօրքի և նաւատորմի մէջ ծառայողները չեն կարող ընտրւել։

Ամփոփելով վերոյիշեալ ասածները, պէտք է հասնենք այն եզրակացութեան, որ դեմոկրատիայի սկզբունքը պահանջում է ընդհանուր, հաւասար, պրոպորցիոնալ և փակ ձայնատուութիւն։

Դառնալով Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների պետական կազմակերպութեան ընութեան, մենք առաջին անգամ գործ ենք ունենում մի դաշնակցական պետութեան կազմակերպութեան հետ։ Թէ Ամերիկայում և թէ Շվեյցարիայում դաշնակցական պետութիւնը կազմւել է պետութիւնների դաշնակցութիւնից։ Սրանց տարբերութիւնն այն է, որ պետութիւնների դաշնակցութեան իւրաքանչիւր անդամ կատարելապէս ինքնիշխան վեհապետ է։ Պետութիւնները միմեանց հետ դաշնագրութիւններ են կապում, իրարից կատարելապէս անկախ մնալով, քանի որ չկայ նրանց վրայ որևէ ընդհանուր իշխանութիւն։ Իսկ երբ մի քանի պետութիւններ կազմում են դաշնակցական կամ ֆեդերատիւ 1)

---

1) Մօտ ապագայում լոյս կտեսնի ֆեդերացիային նուիրուած մի առանձին հրատարակութիւն։

Ծ. «Յառաջ»-ի

պետութիւն, այն դէպքում երևան է գալիս մի նոր ծայրագոյն դաշնակցական իշխանութիւն, որը սահմանափակում է իւրաքանչիւր առանձին պետութեան իշխանութիւնը։

Ամերիկայում ֆեդերացիան կազմուել է նրա համար, որովհետև նրա բոլոր նահանգները՝ իբրև Անգլիայի գաղութները, միմեանց նկատմամբ շատ ընդհանուր բաներ են ունեցել։ Այդ նահանգների համար օգտակար է եղել մեծացնել իրանց ոյժերը իրար հետ միանալով, իբրև մի ամբողջութիւն։ Սակայն ֆեդերացիա կարող է լինել յարմարութեամբ և ուրիշ դէպքերում։ Եթէ որևէ մեծ պետութիւն կազմուել է մի քանի այնպիսի տարացեղ ժողովրդներից, որոնք միմեանցից խիստ տարբերւում են իրանց բարքերով, կրօնով և լեզուով, այն ժամանակ այդպիսի պետութեան համար շատ յարմար է դաշնակցական պետութեան ձևը։ Այդ ձևի պետութիւնը հնարաւորութիւն է տալիս, առանց քանդելու այն կապերը, որոնք կազմուել են տարբեր ժողովրդների միջև, կազմակերպել անկախ պետական միութիւններ՝ իրար հետ շաղկապուած մի ընդհանուր դաշնակցական իշխանութեամբ։

Հիւսիսային Ամերիկայի առանձին անկախ նահանգները սկզբում կազմում էին «բարեկամութեան դաշնակցութիւն ընդհանուր պաշտպանութեան, ազատութեան ապահովութեան և ընդհանուր բարեկեցութեան նպաստելու նպատակով»։ Դաշնակցութեան կենդրօնական օրգանը դարձաւ կօնգրէսը, որի անդամներն էին առանձին նահանգների պատգամաւորները։ Այդ օրինակ պատգամաւորների և ժողովրդական ներկայացուցիչների միջև անգին տարբերութիւն կայ։ Իւրաքանչիւր ներկայացուցիչ ամբողջ ժողովրդի ընտրեալն է համարւում։ Դրա համար էլ նա պէտք է մտածի ամբողջ ժողովրդի բարիքի համար և ոչ թէ միայն այն շրջանի համար, որի ազգաբնակութիւնը նրան ընտրել է պարլամենտի անդամ։ Հէնց այդ է պատճառը, որ ընտրողներն իրաւունք չունին նրան յանձնարարութիւններ և ցուցումներ տալու, թէ նա ինչպէս պէտք է վարուի պալատում այս կամ այն հարցի քննութեան ժամանակ։ Պատգամաւորը, ընդհակառակը, ուղարկւում է նահանգի կառավարութեան կողմից, որպէսզի այդ կառավարութեան կարծիքը հաղորդի և պաշտպանի։ Նրան յանձնարարութիւն է տրւում, նա պէտք է ղեկավարուի իր կառավարութեան ցուցումով և հրահանգով։ Պատգամաւորը ստանում է, ինչպէս որ ասում է պետական իրաւունքի գիտութեան մէջ, հրա-

վայական կամ իմպերատիւ մանդատ։ Որովհետև նահանգները դաշնակցութեան մէջ էլ պահպանել էին իրանց ինքնակախութիւնը և նրանցից իւրաքանչիւրը հաւասար էր համարւում միւսներին, դրա համար էլ նահանգներից ուղարկւող պատգամաւորների թիւը տարբեր է եղել, բայց նրանք բոլորն էլ օգտւել են մի ձայնով։

Անկախութեան համար մղած պատերազմից յետոյ, 1787 թւի կոնգրէսում անբաւարար ճանաչուեց այդպիսի դաշնակցութիւնը և մշակուեց մի դաշնակցական սահմանադրութիւն։ Այդ սահմանադրութիւնը հետզհետէ ընդունեցին բոլոր 13 նահանգները, որոնք սկզբում մտել էին դաշնակցութեան մէջ։ Այդ սահմանադրութեամբ Միացեալ Նահանգների ազգաբնակութիւնը արդէն կազմում է մի միացեալ ժողովուրդ, պետական միացեալ իշխանութեամբ, որը առանձին կանտոնների կառավարութիւններին ինքնակախ է թողնում միայն որոշ սահմաններում։ 1787 թ. սահմանադրութիւնը ժողովրդի այդ միութիւնն և ծայրագոյն իշխանութիւնը հանդիսաւոր կերպով յայտարարեց հետևեալ հիմնական խօսքերով. «Մենք, Միացեալ Նահանգների ժողովուրդս մտադիր լինելով աւելի կատարեալ դաշնակցութիւն կազմել, արդարադատութիւնը հաստատելու, ներքին խաղաղութիւնն ամրացնելու, արտաքին ապահովութիւնը ապահովելու, ընդհանուր բարեկեցութեանը աջակցելու և մեզ ու մեր սերնդին ազատութեան բարիքը երաշխաւորելու համար սահմանում և հաստատում են սոյն սահմանադրութիւնը Ամերիկայի Միացեալ-Նահանգների համար»։ Այդ ժամանակից ի վեր Միացեալ Նահանգների ամբողջ ազգաբնակութիւնը կազմում է մի միացեալ ժողովուրդ։ Դրա համար էլ իւրաքանչիւր նահանգում քաղաքացիների իրաւունքներով օգտւում են Հիւսիսային-Ամերիկական հանրապետութեան այն բոլոր բնակիչները, որոնք ապրում են այդ նահանգի տերիտորիայի վրայ [1])։

Նատուրալիզացիան, այսինքն հանրապետութեան քաղաքացիների թւում մէկին ընդունելը վերապահւած է դաշնակցական իշխանութեան։ Այդ իշխանութիւնն է հաստատում ռաքսային և դաշնակցութեան ծախքերը ծածկող տուրքերը, ղեկավարում է օտար պետու-

---

1) Հիւսիսային Ամերիկայի բոլոր նահանգները միասին հանրապետութիւն են։ Ծ. Հ.

թիւնների հետ ունեցած դիպլոմատիական յարաբերութիւնները, կարգադրում և առաջնորդում է (ի դէմս նախագահի) երկրի սպառազինած բոլոր ոյժերին և կառավարում է երկրի փոստային և դրամական գործը։ Միւս բոլոր գործերը բոլորովին անկախ կերպով կարգադրում են իրանք նահանգները մինչև այն ժամանակ, երբ, ի հարկէ, դաշնակցական իշխանութիւնը դաշնակցական սահմանադրութեան մէջ փոփոխութիւններ կը մտցնի։ Ի նկատի ունենալով Նահանգների ինքնակախութեան այդ սահմանափակումները, շատ կարևոր է որոշել սահմանադիր իշխանութեան գործողութեան կարգը։ Այդ իշխանութիւնը պատկանում է առանձին սահմանադիր կոնվենտի, որ գումարւում է առանձին նահանգների բոլոր սահմանադրական ժողովների $^2/_3$-ի պահանջով։ Սակայն այդ կարգը չէ գործադրւում և բոլոր սահմանադրական փոփոխութիւնները կատարւում են կօնգրէսի նախաձեռնութեամբ, միայն հետևեալ պայմանը կատարելով։ Կօնգրէսի իւրաքանչիւր պալատում ցանկալի փոփոխութիւնների համար պէտք է ցանկութիւն յայտնի $^2/_3$-րդ մեծամասնութիւնը. փոփոխութիւններ կարող են ընդունւել բոլոր նահանգների $^3/_4$-ի համաձայնութեամբ։ Այդպիսով կօնգրէսը սահմանադրական իշխանութիւն ունի նահանգների։

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգների հանրապետութեան այդ առանձնայատկութիւններից, այնտեղ պատահում ենք դարձեալ մի քանի նոր գծերի հետ։ Դրանք գլխաւորապէս արտայայտւում են գործադիր և օրէնսդրական իշխանութիւնը բաժանելու ձգտման մէջ։ Նախագահն իբրև պետութեան տեսանելի գլուխը օգտւում է իրաւունքներով, որոնք նման են Ֆրանսիական հանրապետութեան նախագահի իրաւունքներին։ Բայց իբրև իշխանութեան գլուխ, նա աւելի անկախ դիրք ունի։ Նա է նշանակում բոլոր մինիստրներին, որոնք ենթարկւած են միայն նրան և միայն նրա առաջ էլ պատասխանատու են։ Այդ հանգամանքը նրան ահագին ոյժ է տալիս, որովհետև բոլոր պաշտօնակատար անձինք նրանից կատարելապէս կախումն ունին։

Նա ոչ միայն կարգադրում, այլ և առաջնորդում է զօրքին։ Նախագահի ընտրութիւնը նոյնպէս կախւած չէ օրէնսդիրներից։ Բայց այդպիսի իշխանութիւն կենտրոնացնելով նախագահի ձեռքում, սահմանադրութիւն կազմողները չեն վերապահել ժողովրդին նրա ընտրութիւնը։ Այդ ձևով նախագահն իբրև ժողովրդի ընտրեալ շատ հեղինակութիւն կունենար։ Հէնց դրա համար էլ

նախագահի և փոխ-նախագահի ընտրութիւնների համար առանձին ձև է հաստատւել։ Նրանք ընտրւում են պատուիրակների մի առանձին ժողովով, որոնց ընտրում է ժողովուրդը երկու պալատների անդամների քանակին հաւասար թիւով։ Այդ պատուիրակները չպէտք է կօնգրէսի անդամ լինին։ Այդ հանգամանքը ժողովրդին դժուարութեան մէջ է դնում, որովհետև նա պէտք է ընտրի ժարդկանց կրկնակի թիւ, մէկ՝ պալատների, և միւսը՝ նախագահ ընտրելու համար։

Նախագահիցն է կախւած սենատի [1]) համաձայնութեամբ նշանակել ծայրագոյն դատարանի անդամներին, որ բաղկացած են նախագահից և ութ անդամներից։ Ի դէպ Ամերիկայում դատաւորները բոլորովին անկախ են և կարող են պաշտօնից հեռացնուել միմեայն դատարանի միջոցով։ Դատող իշխանութիւնը նոյնպէս կարող է օրէնքները ոչ սահմանադրական ճանաչել։ Որովհետև մինիստրները պատասխանատու չեն կօնգրէսի առաջ, ուստի նրանց համար պատասխանատու է նրանց նշանակող նախագահը։ Դրա համար կօնգրէսին է իւր ամբողջութեամբ վերապահւած նախագահին պաշտօնից հեռացնելու իրաւունքը։ Մոշոր մեծամասնութեան ցանկութեան դէպքում, իսկ սովորական կարգով նա օրէնսդրական օրգան է։

Այդ դէպքում ներկայացուցիչների պալատը կարող է նրան յանձնել սենատի դատաստանին։ Նախագահի հեռացման կամ մահուան դէպքում նրան փոխարինում է փոխ-նախագահը, որ մինչ այդ նախագահում է սենատում։

Այդպիսով չնայելով այն ահագին իշխանութեանը, որ ունի նախագահը և որը անհամեմատ աւելի մեծ է անգլիական թագաւորի և ֆրանսիական նախագահի իշխանութիւնից, այնուամենայնիւ Ամերիկայում հնարաւոր է նախագահին ոչ միայն կրկին չընտրելու, այլ և պաշտօնանկ անելու։ Դրա մէջ է արտայայտւում ժողովրդի ծայրագոյն իշխանութեան դեմոկրատիկ ըմբռնումը, երբ ժողովուրդը յանձնում է այդ իր ներկայացուցիչներին։ Այդ դեմոկրատիկ սկզբունքի համաձայն Ամերիկայում ժողովրդի ընտրեալների համար աւելի կարճ ժամանակ է որոշւած։ Օրինակի համար ստորին պալատի ներկայացուցիչներն ընտրւում են երկու տարով, սենատինը՝ 6 տարով, իսկ նախագահն և

[1]) Կօնգրէսի վերին պալատը կոչւում է սենատ։ Ծ. Հ.

փոխ-նախագահը 4 տարի ժամանակով։ Այդքան ժամանակի ընթացքում աւելի շատ համաձայնութիւն կլինի ժողովրդի և նրա ներկայացուցիչների միջև։ Պալատների կազմակերպութեան մէջ երևան է գալիս պետութեան դաշնակցական ձևը։ Հիւսիսային Ամերիկայի իւրաքանչիւր նահանգ, որքան էլ մեծ լինի նրա աղգաբնակութիւնը, ուղարկում է 2-ական ներկայացուցիչ։ Այդ բանը նրա համար է արւում, որովհետև նահանգները իբրև առանձին պետութիւններ միմեանց նկատմամբ հաւասար են ճանաչւում։ Սակայն սենատորները իրանց գործունէութեան մէջ անկախ են և նահանգներից երբէք հրահանգներ չեն ստանում։ Ստորին պալատը համարւում է հանրապետութեան միացեալ ժողովրդի ներկայացուցիչը։ Դրա համար էլ նրա անդամների քանակը որոշւում է ոչ թէ կանտոնների թւով, այլ կախւած է հանրապետութեան ամբողջ աղգաբնակութիւնից։ Սկզբում իւրաքանչիւր 30,000 բնակչին ընկնում էր մի պատգամաւոր, իսկ այժմ 80,000-ին է ընկնում։

Սենատի անդամներն ընտրւում են նահանգների օրէնսդրական ժողովներով։ Պալատի ներկայացուցիչներն ընտրւում են ժողովրդի ընդհանուր, անմիջական և փակ ձայնատուութեամբ։ Դրա համար իւրաքանչիւր նահանգ բաժանւում է այնքան շրջանների, որքան պատգամաւորներ է հարկաւոր այնտեղից ուղարկելու։ Իւրաքանչիւր շրջան ընտրում է մի ներկայացուցիչ։ Երկու պալատների անդամներն էլ վարձատրութիւն են ստանում։

Վերոյիշեալ տեսութիւնից տեսնում ենք, որ Հիւսիսային-Ամերիկական հանրապետութեան դաշնակցական հաստատութիւնների կազմակերպութիւնը հիմնւած է իշխանութիւնների բաժանման վրայ։ Կոնգրէսն անմիջական ազդեցութիւն չունի գործադիր իշխանութեան վրայ. նախագահն ու մինիստրները կոնգրէսի նիստերին չեն մասնակցում։ Հետևապէս, չնայելով վերոյիշեալ հաստատութիւնների դեմոկրատիկ լինելուն, չէ կարելի ասել, որ Ամերիկայում պարլամենտական կառավարութիւն է, որովհետև հանրապետութեան կառավարութիւնը օրէնսդիր իշխանութիւնից անկախ է գործում։ Այնտեղ կազմակերպութեան այդ ձևը լաւ է գործում և իշխանութիւնների մէջ իրար դէմ ընդհարումներ չէ առաջացնում։ Սակայն այդ միևնոյն կարգը, որը գործադրւում է հարաւային Ամերիկայում ռոմանական ցեղի [1]) հիմնած պետու-

[1]) Իսպանացիների և փորթուգալացիների հիմնածները։ Ծ. Հ.

թիւններում, որոնց աղգաբնակութիւնը կուլտուրականութեամբ չէ փայլում և անգլո-սաքսերի կարգապահութիւնը չունի, անբաւարար կերպով է գործում։ Հնարաւոր չլինելով տարբեր իշխանութիւնները միմեանց հետ համաձայնեցնելու նրանց միևնոյն իշխանութեանը (պարլամենտին) հպատակեցնելու միջոցով, այդ հարաւային պետութիւնների մէջ մշտական ընդհարումներ են լինում, որոնք վերջանում են դրանց նախագահներին յեղափոխական միջոցներով զահընկեց անելով, նախագահներ՝ որոնք բռնակալական իշխանութիւն են իւրացնում։

Վերջապէս հարկաւոր է յիշել, որ Հիւսիսային-Ամերիկայի առանձին նահանգների հանրապետութիւններում սրանց սահմանադրութիւնը հաստատւում է ժողովրդական ձայնատուութեամբ։ Հետզհետէ օրէնսդրութեան այդ իսկական դեմոկրատիկ ձևը տարածւում է նրանց մէջ և սովորաբար օրէնքների վրայ։ Այդ սովորութիւնը մնացել է դեռ այն ժամանակից, երբ նահանգները դեռ ևս Անգլիայի գաղութներն էին։ Սակայն նա չէ անցել դաշնակցական սահմանադրութեան մէջ։ Դրա համար էլ մենք նրա մասին կխօսենք Շվէյցարիայի պետական կազմակերպութեան քննութեան ժամանակ, այն Շվէյցարիայի, որտեղ նա rեֆերենdում անունով զարգացել և լայն կերպով տարածւել է։

Վերջապէս պէտք է մատնացոյց անել և այն հանգամանքի վրայ, որ Ամերիկայի մի քանի նահանգներում ընդհանուր ընտրողական իրաւունք ունին և կանայք, որոնք այդպիսով պետութեան իսկական քաղաքացիներ են դարձել։ Այդ նահանգներն են. Վայոմինգ, Կոլորադո, Ուտա, և Նեվադա։

VI

Շվէյցարիան էլ ներկայացնում է նոյնպիսի դաշնակցական պետութիւն, որպիսին Ամերիկան է, սակայն նրա բոլոր հիմնարկութիւնները ժողովրդական իշխանութեան գաղափարովն են տոգորւած։ Իբրև մի իսկական դեմոկրատիա, որտեղ ծայրագոյն իշխանութիւնը պատկանում է հէնց իրան ժողովրդին, Շվէյցարիական սահմանադրութիւնը պետութեան գլուխ բոլորովին չէ ընդունում։ Նրա բարձրագոյն հիմնարկութիւններն են. ա) դաշնակցական ժողով, որ համապատասխանում է ամերիկական կոնգրէսին, բ) դաշնակցական խորհուրդ, որ մինիստրների կոմիտէի

դրնեէխաղում, և դ) դաշնակցական դատարան։ Դաշնակցական ժողովը բաղկացած է երկու պալատներից. ազգային խորհուրդ, իբրև շվեյցարական ամբողջ ժողովրդի ներկայացուցիչը և կանտոնական խորհուրդ, որի համար, ինչպէս ամերիկական սենատն է, իւրաքանչիւր կանտոն [1]) ուղարկում է 2-ական ներկայացուցիչներ։ Բայց այստեղ կանտոնային խորհրդի ֆեդերատիւ նշանակութիւնը աւելի ուժեղ կերպով է ընդգծած, որովհետև ընտրութեան եղանակը և մինչև անգամ ժամանակը չէ որոշած դաշնակցական սահմանադրութեամբ և բացառապէս կախուած է կանտոններից։ Սակայն Ամերիկայի սենատորների նման կանտոնային խորհրդի անդամները կանտոններից իմպերատիւ մանդատներ չեն ստանում։ Ազգային խորհրդի անդամները ընտրւում են երեք տարի ժամանակով ընդհանուր, հաւասար, անմիջական և փակ ձայնատուութեամբ։ Ընտրողական տարիքը 20 տարին է համարւում։ Հոգևորականութիւնը չէ կարող ընտրել։ Երկու խորհրդներումն էլ ներկայացուցիչների աշխատանքը վարձատրւում է։

Առանձնապէս աչքի է ընկնում գործադիր իշխանութեան կազմակերպութիւնը, որ պատկանում է դաշնակցական խորհրդին։ Նա բաղկացած է եօթը անդամներից, որոնք ընտրւում են օրէնսդրական երկու խորհրդների միացեալ ժողովում։ Նրանք բաժանում են իրար մէջ կառավարութեան զանազան վարչութիւնների ղեկավարութիւնը և իրանց միջից իւրաքանչիւր տարւայ համար ընտրում են դաշնակցական խորհրդի նախագահին և փոխ-նախագահին։ Միևնոյն անձնաւորութիւնը երկու տարի շարունակ չէ կարող նախագահ լինել։ Խորհրդի նախագահը Շվեյցարական դաշնակցութեան անունով յարաբերութիւններ է վարում օտար պետութիւնների հետ, բայց նա չէ համարւում երկրի նախագահը և ոչ մի առանձին իշխանութիւն չունի։ Խորհրդի անդամները օրէնսդրական ժողովից բոլորովին անկախ են և նրանց առաջ պատասխանատու չեն, միայն դատաստանական որոշումը նրանցից որև է մէկի մասին կարող է նրանց ստիպել պաշտօնը թողնելու։

Դաշնակցական խորհուրդն էլ ուրիշ տեսակ է կազմակերպւած, քան միւս երկրներում։ Նրա իններ անդամները ընտրւում են դաշ-

[1]) Շվեյցարիայի կանտոնները համապատասխանում են Ամերիկայի նահանգներին։ Ծ. Հ.

նակցական ժողովից 6 տարի ժամանակով դաշնակցութեան բոլոր քաղաքացիներից, որոնք իրանց քսաներորդ տարիքին են հասել։ Նրանք անփոփոխելի են իրանց լիազօրութիւնների ժամանակի ընթացքում։ Դաշնակցական դատարանը քննում է քաղաքացիական բոլոր գործերը, որոնց մէջ իբրև մի կողմը երևան է գալիս դաշնակցութիւնը կամ կանտոնները, քրէական գործերը դաշնակցութեանը դատաճանելու կամ հակառակելու դէպքերում. բացի դրանից քննում է դաշնակցական և կանտոնային իշխանութիւնների մէջ ծագած ընդհարումները և վերջիններիս միջոցով դաշնակցութեան քաղաքացիների իրաւունքները խախտելու ժամանակ։

Դաշնակցական հաստատութիւնների այս համառօտ տեսութիւնից արդէն նկատելի է նրանց աւելի դեմոկրատիքական եղանակով հաստատւած լինելը. հաստատւած է ընտրողների աւելի պակաս տարիք. որոշած է դատաւորների ընտրութիւնն և նրանց լիազօրութիւնների ժամանակամիջոցը. գործադիր վարչութիւնների ընտրովի ղեկավարներին միւս իշխանութիւնների վերաբերմամբ հաւասար դիրքի մէջ են դրել, չնայելով որ զրկւած են պետութեան գլուխ լինելու շուքից։ Բայց Շվեյցարիային բոլորովին դեմոկրատիկ բնաւորութիւն տուողը ժողովրդի անմիջական իշխանութեան հաստատումն է։ Ամբողջ Եւրոպայի մնացած մասը ճանաչում է կառավարութեան ներկայացուցչական ձևը, երբ վեհապետ ժողովուրդը, սակայն, իր իշխանութիւնը յանձնում է իր լիազօրների ձեռքը։ Շվեյցարիան ճանաչում է անմիջական ժողովրդական կառավարութեան տեսակներ. առաջին տեսակը ներկայացնում է ազգային ժողովը, որ մնացել է Շվեյցարիայի միայն չորս կանտոններում, իսկ երկրորդ տեսակը ռեֆերենդումը կամ ժողովրդական ձայնատուութիւնն է, որ մտցրել է մնացած բոլոր կանտոններում, բացառութեամբ Ֆրիբուրգի։

Ազգային ժողովը, որ գումարւում է կանաչ մարգագետնի վրայ, կապոյտ և պարզ երկնքի տակ, բարձր լեռների դիմաց, որ շվեյցարական ազատութեան նեցուկն է, ներկայացնում է դեմոկրատիայի ամենագեղեցիկ և ամենակատարեալ մարմնացումը։ Այդպէս է այն բոլոր մարդկանց հիացած վկայութիւնը, որոնք բաղդ են ունեցել ընդհանուր գործի համար հաւաքւած ազատ քաղաքացիների այդ հսկայական և վեհ ժողովը երբ կիցէ տեսնելու։

Այդ օրինակ ազգային ժողովները քուէարկում են օրէնքներ,

ընդհանուր կարգադրութիւններ են անում և ընտրում են պաշտօնակատար անձանց։ Բայց չնայելով ազգային այդ ժողովների պատկերի ամբողջ գրաւչութեանը, այնուամենայնիւ նրանց դարը Շվէյցարիայում էլ է անցել։ Ազգաբնակութեան բազմանալը այդ ժողովները չափազանց անյարմար է դարձնում. այդպիսի մեծ ժողովում հնարաւորութիւն չկայ օրէնքների նախագծեր քննելու և այդպիսով քաղաքացիներին միայն ճնում է բաւականանալ ձայնատուութեամբ այն հարցերի մասին, որոնք նրանց նախօրօք հաղորդւում են տպած յայտարարութիւններով (այդպէս են անում Ապպենցել Առւսսէր Ռոդէն կիսականտոնում)։

Սակայն երբ ակներև է դառնում, որ չարժէ միասին հաւաքւել, երբ անհամեմատ աւելի հեշտ է այն տալ համայնքների մէջ յայտարարութիւնների միջոցով, որոնք յետոյ կարող են հաշուի առնել և այդպիսով ցոյց տալ ժողովրդի կարծիքը, այն ժամանակ հերթը հասնում է բեֆերենդումին, որը հետզհետէ բռնում է ազգային ժողովների տեղը. օրինակի համար այդ ժողովները 1848 թւին վերջացրին Շնիցում և Ցուգում և դրանք փոխարինեցին բեֆերենդումով։

Բեֆերենդումի էութիւնը կայանում է նոր օրէնքները ժողովրդի հաստատութեանը ենթարկելու մէջ։ Բեֆերենդումն երկու տեսակ է լինում. պարտադիր և ֆակուլտատիւ։ Առաջին դէպքում ժողովրդի հաստատութեանն են ենթարկում բոլոր նոր ընդունելիք օրէնքները, իսկ երկրորդ դէպքում նրանք քուարկութեան են ենթարկւում կամ օրէնսդրական ժողովի նախաձեռնութեամբ կամ քաղաքացիների որոշ թւի պահանջմամբ։

Առաջին անգամ ժողովրդի ձայնատուութիւնը գործադրւեց շվէյցարական սահմանադրութեան հաստատման ժամանակ 1802 թւին։ Իբրև մշտապէս գործող կանոն նա առաջին անգամ եղաւ 1831 թւին Սէն-Գալլէն կանտոնում, ժողովրդական «veto»-ի ձևով, դեմոկրատական այդ ծաղիկը, որ փթթել է երբեմն Հռոմի քարքարոտ հողի վրայ։ Սէն-Գալլէնի քաղաքացիներին իրաւունք տուին քննել այն օրէնքները, որոնք ընդունել էր օրէնսդրական ժողովը և մերժել (իր «veto»-ն ասել) այդ օրէնքներից նրանց, որոնք որևէ կերպով անցանկալի են հանդիսանում։ Աւելի ուշ ժամանակում «veto»-ն մտցրւեց նաև միւս կանտոններում։

Բեֆերենդումն իր անունը փոխ է առել XVI-րդ դարու մի սովորութիւնից, որ գործադրւում էր Գրաուբիւնդէն և Վալլիս կանտոն-

ներում, որտեղ համայնքների ներկայացուցիչների հանդիսաւորներում ընդունւած որոշումները ներկայացնում էին նոյն ինքն համայնքների քննութեան և հաստատութեան (audiendum et referendum)։ Այդ ձևը գործադրւում էր շվէյցարական կանտոնների դաշնակցութեան մէջ 1815 թւից մինչև 1848 թ։ Կանտոնների պատգամաւորների որոշումները կարևոր դէպքերում ներկայացնում էին կանտոնային ժողովներին վճռելու։ Այդպիսով բեֆերենդումը ներկայացնում էր veto-ի հակառակը, որովհետև առաջնի էութիւնը հաստատման մէջ էր կայանում, իսկ երկրորդինը՝ բացասելու մէջ։ Սակայն ակներև է, որ բեֆերենդումը իր մէջ պարունակում է և veto-ի իրաւունքը, որովհետև մի օրէնքի չհաստատելը նրա բացասումը կամ մերժումն է նշանակում։

1845 թ. Վաադ կանտոնն ընդունում է ֆակուլտատիւ բեֆերենդումը, որ կարող էր գործադրւել իւրաքանչիւր օրէնքի վերաբերմամբ կանտոնի մեծ խորհրդի կամ օրէնսդրական ժողովի հայեցողութեամբ։ Դրանցից յետոյ բեֆերենդումը այդ կամ ուրիշ ձևով տարածւում է ամբողջ Շվէյցարիայում։

Չնայելով որ նա երևան է գալիս կանտոնային օրէնսդրութիւններում աւելի պարզ, սակայն հէնց նոյն իսկ դաշնակցութեան մէջ նա հետզհետէ աւելի լայն չափեր է ընդունում։ Այստեղ նա սկզբում ընդունւում է ֆակուլտատիւ բեֆերենդումի ձևով. իւրաքանչիւր օրէնք ժողովրդի կամ դաշնակցական ժողովի ցանկութեամբ կարող է ենթարկւել ժողովրդական ձայնատուութեան, որը բացասում կամ հաստատում է ժողովից ընդունւած նախագիծը։

Ժողովրդի կամքով ձայնատուութեան ենթարկւելու համար անհրաժեշտ է 30,000 քաղաքացիների կամ երեք կանտոնների յայտարարութիւնը։ Ձայնատուութիւնը կամ քուէարկութիւնը կատարւում է համայնքներում բիւլլետենների միջոցով և նրա իսկական արձանագրութիւնը ուղարկւում է դաշնակցական խորհրդին։ 1891 թւի Յուլիսի 5-ին շվէյցարական ժողովուրդը 168,308 ձայնի մեծամասնութեամբ ընդդէմ 110,825 ընդունեց մի նոր օրէնք, որ տնօրինում էր ժողովրդի նախաձեռնութեան և վճռի իրաւունքը սահմանադրութեան վերաքննութեան հարցի նկատմամբ։ Եթէ ազգային կանտոնային խորհուրդները չհամաձայնեն միմեանց հետ այդ հարցի վերաբերմամբ, այն ժամանակ այդ հարցը ենթարկւում է ժողովրդական ձայնատու-

թեան։ Երբ ժողովուրդը այդ հարցը դրական կերպով է լուծում, երկու խորհուրդներն էլ արձակւում են, իսկ նոր ընտրեալները ձեռնարկում են սահմանադրութեան փոփոխութիւնների նախագծի մշակման, որ յետոյ ենթարկւում է ռեֆերենդումի։ Այդօրինակ ձայնատուութիւն կարող են պահանջել 50,000 քաղաքացի նաև, երբ երկու խորհուրդները համաձայնել են իրար հետ։ 50000 քաղաքացիներ հէնց իրանք կարող են պահանջել սահմանադրութիւնը փոփոխութիւնների ենթարկելու։ Ժողովրդական նախաձեռնութեան այդ իրաւունքը մշակել է քաղաքացիների խնդրագրեր (պետիցիա) տալու իրաւունքից, որով նրանք միջնորդութիւններ են անում օրէնսդրական ժողովին։ Նախաձեռնողները կարող են իրանց սեպհական նախագիծը առաջարկել, որն և այդպիսի դէպքում ուղղակի ենթարկւում է ժողովրդի ձայնատուութեան։ Օրէնքն ընդունելու համար պէտք է լինի ժողովրդի և կանտոնների մեծամասնութեան հաւանութիւնը. կանտոնի ձայնը համարւում է կանտոնի քաղաքացիների ձայնատուութեան արդիւնքը։

Անկասկած է, որ ժողովրդական կառավարութեան դաղափարը աւելի արտայայտիչ կերպով իրագործւում է հէնց ժողովրդական ժողովում, որ ամենից լաւ է պաշտպանում ազատ քաղաքացիների միութեան գիտակցութիւնը, բայց դրա փոխարէն ռեֆերենդումը տալիս է ժողովրդական իշխանութեան մի ձև, որ պաշտպանում է ամենախոշոր պետութիւններին։ Մամուլի շնորհիւ տեղեկութիւններ հաղորդելու յարմարութիւնը ժողովրդին հնարաւորութիւն է տալիս ներկայացուցիչներին հետևելու և կատարելապէս ապահովում է ձայնատուութիւնը մտածւած կատարել և ժողովրդական ձայների հաւաքելու հեշտութիւնը։ Կարելի է մինչև անգամ ենթադրել, որ իւրաքանչիւր ժողով, որտեղ մասսան հեշտութեամբ կարող է ընկնել դրդուած դրութեան մէջ, աւելի քիչ ընդունակ է երկրի հանգիստ և գիտակից կարծիքը տալու, քան այդ հնարաւոր է ռեֆերենդումի միջոցով։

Սակայն մինչև այժմ մենք ռեֆերենդումի վերաբերմամբ գիտնական շատ հակառակորդների ենք պատահում։ Օրինակի համար ասում են, որ պարտադիր ռեֆերենդումը, որի ժամանակ քուէարկութեան են ենթարկւում պալատներից ընդունւած երկրի բոլոր օրէնքները, պատճառում է ժողովրդին շատ ծախսեր և դժուարութիւններ։ Սակայն այդ ենթադրութիւնները կարող են նշանակութիւն ունենալ միմիայն այնտեղ, որտեղ ռեֆերենդումը

սխալ է դրւած։ Եթէ ժողովրդի ձայնատուութիւնը կատարել միայն որոշ և միմեանցից ոչ շատ մօտ ժամանակներում, այն ժամանակ ուղղակի անհասկանալի կլինի, թէ ինչ դժուար բան է, որ մէկը երեք կամ վեց ամիսը մի անգամ գնայ իր համայնքի պաշտօնատեղին և իր «այո» ն կամ «ոչ»-ը նշանակի բիւլլէտընի վրայ առաջարկւած հարցերի կողքին։

Յետոյ ասում են, որ շատ հարցեր ամբողջ ժողովրդին չեն հետաքրքրում, իսկ մի քանի օրէնքներ էլ որոշում են տեխնիքական կանոններ, որոնք հասկանալի չեն բոլոր քաղաքացիներին։ Բայց դա զուտ թիւրիմացութիւն է։ Ռեֆերենդումի պարտադիր լինելը կայանում է նրանում, որ օրէնքներն անպատճառ ենթարկւեն ժողովրդի ձայնատուութեան, իսկ իւրաքանչիւր մասնաւոր անհատ ստիպւած չէ անպատճառ իր ձայնը տալու։ Ինչ վերաբերում է տեխնիքական կանոններին, պէտք է ասել, որ նրանք սկզբունքային դեր չեն խաղում և դրա համար էլ, բնական է, որ քաղաքացին կամ կիսուսափի այդ հարցի մասին ձայն տալու, կամ ձայն կտայ պատգամաւորներից նրա հետ, որ ներկայանում է իբրև իր կուսակցութեան ներկայացուցիչը։ Պէտք է յիշել և այն, որ ախր պալատների համար էլ ամեն տեսակ հարցերի մասնագէտներ չեն ուղարկւում։ Բացի դրանից տեխնիքական մանր կանոնները մեծ մասամբ որոշւում են ոչ թէ օրէնքներով, այլ կառավարութեան կարգադրութիւններով։

Աւելի էական կարող է թուալ այն պատճառաբանութիւնը, իբր թէ ռեֆերենդումը թուլացնում է ժողովրդական ներկայացուցիչների եռանդը, որովհետև նրանք գիտեն, որ իր անձից չէ կախւած վերջին վճիռը։ Բայց չէ՞ որ մեծուլի ներկայացուցիչներն էլ, որոնք երբէք վճռողական ձայն չունեն, սիրով են ընդունում օրէնքները։ Պատգամաւորներն յաճենայն դէպս գիտեն, որ նրանց կարծիքը ահագին ազդեցութիւն պէտք է ունենայ իրանց ընտրողների վրայ։ Եւ վերջապէս ֆակուլտատիւ ռեֆերենդումի դէպքում ոչնչանում են և այդ առարկութիւնները, որովհետև այն ժամանակ ժողովրդական քուէարկութեան են ենթարկւում միմիայն քիչ և ընդհանուր հետաքրքրութիւն ունեցող հարցեր, իսկ նրանց մեծ մասը բացառապէս վճռում են պատգամաւորները։

Բայց ֆակուլտատիւ ռեֆերենդումի դէմ էլ առարկում են, որ նա խախտում է պետական օրէնսդրութեան սովորական ընդ-

թացքը, որ նա ձայներ հաւաքելու համար ագիտացիա է առաջացնում, որը բորբոքում է քաղաքացիների կրքերն և ստեղծում է նրանցից անընական խմբակցութիւններ։

Դրա հետևանքը լինում է մի վիճակ, որը չէ համապատասխանում ժողովրդի ցանկութեան և օգտին։ Սակայն Շվեյցարական ռեֆերենդումի պատմութիւնը չէ արդարացնում այդօրինակ ենթադրութիւնները, որի մէջ ժողովուրդը ցոյց է տուել շատ գիտակցականութիւն և բաւականաչափ սառնարիւնութիւն։ Կարելի է նոյն իսկ ասել չափազանց շատ, որովհետև ժողովուրդն ընդհանրապէս շատ դանդաղ կերպով է նորութիւններ ընդունում և աւելի շատ հակումն է ցոյց տալիս հին սովորութիւնները պահպանելու։ Սակայն ոչինչ չէ կարելի ունենալ այն պահպանողականութեան դէմ, որը ամփոփած է ժողովրդի կամքի մէջ։ «Ժողովուրդը թագաւոր է», ասում են Շվեյցարիայում, բայց նա բռնակալ չէ, որը ինչպէս որոշում է Հին դարու Հերոդոտը, «խախտում է երկրի սովորութիւնները, բռնաբարում կանանց և առանց դատարանի մահուան պատժի ենթարկում քաղաքացիների»։ Ընդհակառակը ժողովուրդը միայն կարող է պահպանել իր սովորութիւններն և երբէք իր սեպհական ճնշողը չի լինիլ։

Ռեֆերենդումի վերաբերմամբ եղած նախապաշարմունքի արմատը մասամբ գտնւում է այն մտքի մէջ, իբր թէ ժողովուրդը դեռ ևս այնքան չէ հասունացել, որ իր գործերի կառավարութիւնը վերցնի իր ձեռքերում, և մասամբ էլ հիմնւում է Ֆրանսիայի անաջող փորձի վրայ։ Սակայն չպէտք է մոռանալ, որ Ֆրանսիան պլեբիսցիտը [1]) գործադրել է ժողովրդականբռնկումների մոմենտներում և որ նրա նորագոյն պատմութիւնը առաջ է ընթացել ոչ թէ կանոնաւոր զարգացմամբ, այլ մի շարք ցնցող թռիչքներով, որոնք պայմանաւորւում են նախընթաց ճնշումով։

Այդպիսով արդարացի էին նկատել Ֆրանսիական պալատում, ասելով. «այն հանգամանքը, որ կայսրութիւնը ի չարն էր գործ դրել պլեբիսցիտը ժողովրդին դիմելու իրաւունքը, հիմք չէ ծառայում այն բանի համար, որպէսզի զաղարէին օգտուելու այդ իրաւունքով»։ Դրա համար էլ կարելի է համաձայնել միայն այն կարծիքի հետ, որ այն երկիրը, որի, քաղաքական կեանքը երկար ժամանակ կայացել է ժողովրդին ճնշելու և ազգարնակութեան

[1]) Ժողովրդական ձայնատուութիւն այս կամ այն հարցը վճռելու համար։
Ծ. Հ.

մի քանի սակաւաթիւ խմբերի իրենց շահերի համար տիրապետելու մէջ հազիւ թէ անմիջապէս կարողանայ օգտուել ռեֆերենդումով։ Ըստ երևոյթին մի այդպիսի երկրի համար ամենալաւ ձևը պարլամենտական վարչութիւնը կլինի, որը բաւարար չափով հնարաւորութիւն է տալիս ժողովրդական շահերի ներկայացուցչութեան և բացի դրանից գործադիր իշխանութեան վերաբերմամբ մշտական կօնտրոլի, որի կատարելը նախընթաց շրջանում ամենամեծ ճնշման հետ է կապած եղել։ Այդ կոնտրոլը, որի վերաբերմամբ պալատներում մշտական հարցապնդումներ և վիճաբանութիւններ են տեղի ունենում, քիչ պատրաստութիւն ունեցող քաղաքացիների համար խիստ լաւ պարզաբանում է պետական իշխանութեան էութիւնը, նրա պարտականութիւններն ու սահմանները։ Այդպիսով նա երևան է գալիս ժողովրդի համար իբրև ամենալաւ շկոլա այն ճանապարհի վրայ, որով նա բռնակալութիւնից անցնում է անմիջական ժողովրդապետութեան։

Սակայն կուլտուրական և քաղաքականապէս հասուն երկրներում ռեֆերենդումին մեծ ապագայ է սպասում։ Առանց նրան անհնարին է իսկական դեմոկրատիկ վարչութիւն։ Ռեֆերենդումի ժամանակ այլևս անհրաժեշտ չեն այնպիսի արհեստական սիստեմներ, ինչպիսին երկպալատեան ժողովրդական ներկայացուցչութիւնն է, որի նպատակը ժողովրդի վճիռներին աւելի կայունութիւն և նախամտածութիւն տալն է։ Այդ դէպքում ժողովուրդը ինքը մի տեսակ երկրորդ պալատ է ներկայացնում, որ վերջնականապէս վճռում է հարցերը։ Իսկ ներկայացուցիչների պալատը դառնում է մի տեսակ ընտրողական մասնաժողով օրէնքների նախագծերը ժողովրդի համար նախապատրաստելու (գոնէ սկզբունքագծերը ժողովրդի համար նախապատրաստելու (գոնէ սկզբունքագծերը ժողովրդի համար նախապատրաստելու մասին բոլոր կարևոր հարցերի նկատմամբ)։ Ռեֆերենդումի ժամանակ երկպալատեան սիստեմի պահպանելը, ինչպէս որ այդ գոյութիւն ունի Շվեյցարիայի դաշնակցական հաստատութիւնների մէջ և նրա մի քանի կանտոններում անմտութիւն է, որը անկասկած կփոխէ ապագայ օրէնսդրութիւնը։

Նոյն իսկ ռեֆերենդումի հակառակորդները հաստատում են, որ Շվեյցարիայում ժողովուրդը իրեն իմաստուն է ցոյց տուել, հեռու ամեն տեսակ ծայրահեղ միտումներից և տնտես հասարակական միջոցների հետ վարուելիս։

Նշանակելի է, որ Շվեյցարիայի պետական սիստեմը հրաշալի է գործում, չնայելով որ նրա ազգարնակութիւնը տարբեր

ազգերից է բաղկացած. գերմանացիներից, ֆրանսիացիներից և իտալացիներից։ Նրանք բոլորն էլ Շվեյցարիան միատեսակ համարում են իրանց հայրենիքը և միատեսակ էլ չեն ցանկանում միանալ իրանց ազգակից մեծ պետութիւնների հետ։ Շվեյցարական ժողովրդի միութեան գիտակցութիւնը աւելի ևս ամրապնդում է և դա արտայայտւում է նրանով, որ դաշնակցական օրէնսդրութիւնը ընդգրկում է հարցերի աւելի ու աւելի մեծ քանակութիւն, որոնց վճիռները պարտադիր են կանտոնային օրէնսդրութիւնների համար։

Դեմոկրատիայի ոգով շվեյցարական սահմանադրութիւնը բոլոր քաղաքացիների համար պետութեան ամբողջ տերիտորիայի վրայ երաշխաւորում է քաղաքացիների հետևեալ իրաւունքները. 1) հաւասարութիւն օրէնքի առաջ 2) տեղափոխութեան ազատութիւն. 3) կրօնական ազատութիւն, 4) ասոցիացիայի ազատութիւն, 5) մամուլի ազատութիւն, 6) ժողովների և միութիւնների ազատութիւն. 7)խնդրագրերի իրաւունք. 8) բացառիկ դատարանների արգելելը, 9) քաղաքական յանցանքների համար մահւան պատժի արգելելը. 10) առևտրի և արհեստների ազատութիւն, 11) ժողովրդական պարտադիր և ձրի կրթութիւն, 12) խաղալու տների արգելելը։

Դրան պէտք է աւելացնել և այն, որ դաշնակցական իշխանութիւնը չէ կարող մշտական զօրք պահել։ Շվեյցարիան ունի միայն ժողովրդական միլիցիա, որի մէջ գրւում են բոլոր քաղաքացիները 20—44 տարեկան։ Զինուորական վարժութիւններով պարապելու համար նրանք հաւաքւում են միմիայն որոշ օրերը (սովորաբար տօներին)։ Այդպիսով ուրեմն Շվեյցարիայում գոյութիւն չունի այն սարսափելի բեռը, որ ընկնում է ազգարնակութեան վրայ նորակոչ զինուորներին մշտական զօրքերի համար հրաւիրելով և զօրքի պահպանման համար ահագին ծախսեր անելով։ Անգլիայումն էլ չկայ պարտադիր զինուորական ծառայութիւնը, բայց նա ահագին ծախսեր է անում վարձկան զօրքի պահպանութեան համար։

Շվեյցարիան այնքան տնտես է իր ծախսերում, որ դաշնակցական խորհրդի անդամները՝ գործադիր իշխանութեան այդ գլխաւորները ստանում են միայն մի քանի հազար ռուբլի ռոճիկ (ռուսական փողի չափով). բացառութիւն չէ կազմում նոյն իսկ խորհրդի նախագահը, չնայելով որ դաշնակցութիւնը մեծ քանակութեամբ

գործեր է վարում, որովհետև նրան է բացառապէս պատկանում հետևեալ գործերի վարելը. 1) փոստային, հեռագրական և երկաթուղային գործերը. 2) մաքսային գործը. 3) դրամական գործը. 4) չափերի որոշումը. 5) վառօդի արդիւնաբերութիւնը. 6) էմիգրացիայի գործը և 7) բոլոր յարաբերութիւնները օտար պետութիւնների և կանտոնների կառավարութիւնների հետ։

Դաշնակցական եկամուտները կազմւում են մաքսային, պոստ-հեռագրական և երկաթուղային տուրքերից, վառօդի արդիւնաբերութիւնից և զինուորական ծառայութիւնից ազատուող անհատների համար նշանակւած զինուորական տուրքի էքսից։ Թէև դաշնակցական իշխանութիւնները կանտոններից կարող են վճարներ պահանջել, բայց նրանք իսկապէս առանց դրանց են կառավարւում։

Համառօտ տեսութիւն անելով ժամանակակից աւելի հետաքրքիր պետութիւնների կազմակերպութեան մասին, սկսելով Անգլիայի պարլամենտական միապետութիւնից և վերջացնելով Շվեյցարիայի անմիջական հանրապետութեամբ, տեսնում ենք, որ նրանց ամենագլխաւոր նպատակն է պետական իշխանութեան միացումը քաղաքացիների քաղաքական ազատութեան հետ։ Նրանց մէջ ճանաչուել է սկսում այն միտքը, որ պետութիւնը չունի և ոչ մի նպատակ, որ օտար լինէր քաղաքացիների բարեկեցութեան համար։ Պետութիւնը միայն մի միջոց է, որ ապահովում է ազատ զարգացումը։ Դրանով ևս չեմ ուզում ասել, որ Արևմուտքի կեանքում իրօք գոյութիւն ունին այն բոլոր պայմանները, որոնք նպաստում են այդօրինակ զարգացմանը։ Այդ պայմաններից ամենակարևորներից մէկն է քաղաքացիների տնտեսական բարեկեցութիւնը, որ անհաշտելի է սեպհականատէրների ներկայ մրցումի և աշխատանքի ու կապիտալի կռուի հետ։ Եւրոպայի և Ամերիկայի պետութիւնները միայն այժմ դրա նկատմամբ միջամտութեան մի շարք գործեր են սկսում անել աշխատանքի պաշտպանութեան նպատակով։ Այդ փորձերը դեռ ևս շատ թոյլ են. մինչև այժմ էլ ոչ մի պետութեան մէջ դեռևս չէ ճանաչւել այն աշխատանքի իրաւունքը, առանց որի չէ կարող լինել աշխատաւորների դրութեան ապահովութիւն։ Ժամանակակից պետութիւնների բոլոր աջողութիւնները գրեթէ բացառապէս վերաբերում են քաղաքական շրջանին՝ մարդուն պետութեան մէջ ազատագրելուն։

Այդ ազատագրումը ձեռք է բերւում երկու միջոցներով. 1)

Այն մի առանձին քաղաքացու նկատմամբ իւր ցանկութեամբ ապրելու և գործելու ազատութիւնը ճանաչել, դրանով չխանգարելով նրա համաքաղաքացիների ազատութիւնը. 2) պետական իշխանութեան օրգանների այնպիսի կազմակերպութիւն, որպէսզի այդ իշխանութիւնը չկարողանայ ճնշումն գործ դնել։ Մարդկային անձնաւորութեան, իրաւունքների և ազատութեան ճանաչելը ես կարողացայ միայն թռուցիկ կերպով շոշափել։

Իսկ ինչ վերաբերում է պետական օրգանների կազմակերպութեան, այդտեղ մի կողմից երևան եկան իշխանութիւնների բաժանման վերաբերող ուսմունքը, իսկ միւս կողմից էլ ժողովրդին և նրա ներկայացուցիչներին պետական իշխանութեանը մասնակցելու իրաւունք տալը։ Իշխանութիւնների բաժանման վերաբերող ուսմունքը պատմութեան մէջ իր դերն է կատարել։ Դա կարևոր էր մանաւանդ այն ժամանակ, երբ ամբողջ իշխանութիւնը գտնւում էր մի այնպիսի օրգանի ձեռքում, որ ոչ մի կախումն չունէր ժողովրդից։ Այդ ուսմունքը հնարաւորութիւն էր տալիս վերոյիշեալ օրգանի ձեռին պետական իշխանութեան միայն մի տեսակը թողնելու, միւսներին մի տեսակ հակակշռութեան մէջ դնելով նրա վերաբերմամբ։ Սակայն իշխանութիւնների կատարեալ բաժանում երբէք չէ եղել ոչ մի պետութեան մէջ։ Ընդհակառակը, հէնց որ ժառանգական միապետի իշխանութիւնը թուլացաւ, երևան եկաւ ձգտում պետական գործունէութեան բոլոր տեսակները, պետական իշխանութեան բոլոր ֆունկցիաները ժողովրդի ընտրեալների ղեկավարութեան տակ դնելու։ Այդ ձգտումից ծնուել է անգլիական միապետութեան պարլամենտարիզմը, որի յետագայ աստիճանը ներկայացնում է Ֆրանսիայի պարլամենտական հանրապետութիւնը։ Սակայն հէնց այդ պարլամենտարիզմը ներկայացնում է իրրև մի անցողական աստիճան դեմոկրատիկ կազմակերպող կատարելագործութեան մէջ։ Ամերիկայում արդէն ձգտումն է նկատւում իշխանութեան օրգանները ժողովրդից աւելի մեծապէս կախած դարձնել և հէնց դրանով կրճատել ներկայացուցիչների իշխանութիւնը։ Բայց այս դաղափարն իր կատարեալ պարզութեան հասնում է միայն Շվեյցարիայի պետական կազմակերպութեան մէջ, որտեղ ժողովրդին արդէն վերապահած է օրէնքների նախաձեռնութիւնը և հաստատելը։ Հիմք կայ կարծելու, որ այս իսկապէս դեմոկրատիկ հոսանքը զարգանալու է. այդ զարգացումը հնարաւոր է երկու ուղ-

ղութեամբ. ա) որ կարող են լայնանալ այն հարցերը, որոնք ենթարկւում են ժողովրդական ձայնատուութեան. օրինակի համար ռեֆերենդումով անկասկած կվճռուեն ոչ միայն օրէնսդրական հարցերը, այլ և պատերազմի և խաղաղութեան, դաշնադրութիւնների և այլն խնդիրները. 2) որ պաշտօնեաները կը կոչուեն իրենց պաշտօնին ժողովրդական ընտրութեամբ։

Զբաւականանալով իւրաքանչիւր քաղաքացուն տրուած ազատութեամբ և վարչութեան մասնակցութեամբ, արևմտեան պետութիւնները մշակել են և դաշնակցական պետութեան մի տիպ, որտեղ առանձին ազգութիւններն օգտւում են միանգամայն ազատ տեղական ինքնավարութեամբ։ Ֆեդերացիայի այսպիսի սիստեմը մեղմացնում է ազգայնական թշնամութիւնը և միևնոյն ժամանակ դաշնակցական օրէնսդրութեամբ միացնում է զանազան ազգութիւնները, կարծես, նախապատրաստելով նրանց, որ նրանք դառնան համաշխարհային պետական դաշնակցութեան քաղաքացիներ։